№ 93 ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 6

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 6 № 93

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1907** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գրել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

«Հերմէս» տպարանի բանւորները

խորին վշտով յայտնում են իրանց ընկերներին, որ մայիսի 4-ին երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց նոյն տպարանում աշխատող գրաշար՝

ՄԻԽԱՅԻԼ ՄԳԵԲՐԵԱՆԸ

Ցուղարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի, մայիսի 6-ին, առաւօտեան ժամը 10-ին, իրանց տնից (Спасскій пер., рядомъ Преображ. церкви) դէպի ս. Մինասի եկեղեցին, իսկ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։

Կիրակի, մայիսի 6-ին

Բժշկապետ ստատսկի-սօվետնիկ

Ալեքսանդր Արտեմևիչ ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ

(Իվանգօրօդի զինւորական հիւանդանոցի գլխաւոր բժշկի)

մահվան տարեդարձի օրը Թանգոյեան եկեղեցում (ըէալական դպրոցի դիմաց) կը կատարվի հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ, որի մասին յայտնում են ազգականներին, ծանօթներին, ընկերներին և ծառայակիցներին հանգուցեալի քոյրեր Նատալիա Արտէմևնա Տիգրանեանը, Եղիսաբէթ Արտէմևնա Մելիքեանցը և եղբայրները՝ Սերգէյ, Տիգրան և Արշակ Արտէմևիչներ Տէր-Յարութիւնեանները։ Պատարագի սկիզբն ժամը 10 և կէսին, հոգեհանգիստը ճիշտ ժամը 12-ին։ (շ. կ.) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

հրաւիրում է այն անձանց, որոնք ցանկանում են իրանց վրա վերցնել Աւճալայում գոյութիւն ունեցող մեքենայի և կաթսաների արհեստանոցի շինութեան կից շոգեշարժ տի բրիլնի համար նոր շինութիւն կառուցելու աշխատանքը։

Աշխատանքի մէջ մտնում են ամբողջ շինութեան տակ փոսեր փորելը և հիմքերը, մասամբ ջրհան աշխատանքներով բետօններ դարսելը որոշ պատերում և յատակներ ջրի մակերևոյթից ցածր, պատերը քարերով դարսել մինչև պատուհանը և աղիւսով կառուցել պատուհանդանից վերև և պատերի արտաքին մասը գաջով ծեփել։ Բերանացի պայմանաւորումը նշանակված է երեքշաբթի մայիսի 8-ին, ցերեկվայ ժամը 12-ին, քաղաքային վարչութեան շինութեան մէջ։ Գրաւ պահանջվում է 300 րուբլի։

Տեխնիքական պայմանների և նկարների հետ ծանօթանալ ցանկացողները կարող են դիմել վարչութեան շինարարական բաժնին։

1—1

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

յայտնում է ընդհանրութեանը, որ ԵՐԿՐՈՐԴ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ (5, 6 և 7 քաղաքամասեր) ընտրողների վերջնական ցուցակի տպած օրինակներ 1907—1911 քառամեակի Թիֆլիսի Քաղաքային խորհրդի ձայնաւորներ ընտրելու համար, նոյնպէս և ընտրութիւններ կատարելու կանոններն ու հրահանգներ եւ ձայնաւորի թեկնածուների անունը գրելու բլանկներ ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ Քաղաքային Վարչութեան դիւանում մայիսի 3-ից առ. 10—3, ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից։ առ. 2—3

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ-ՃԱՄՓՈՐԴՈՒԹԻՒՆ

Նրանք, որոնք կիսահիւանդ, յոգնավաստակ են, մանկութիւնից սակաւարիւն և սրանց հետևանք ունին Թոքերի, կրծքի, մկանունքի, կոկորդի հիւանդութիւն, Թուլակազմ են, նեարդները քայքայված՝ շարունակ տենդ ունեն, դիւրագրգիռ են, նիհարում են, ախորժակ ու հանգիստ քուն չունեն, ծանր հիւանդութիւնից յետոյ Թոքերի մէջ մնացել է ախտ, հազում են, շնչասպառ լինում, շուտ յոգնում, մրսկոտ են, տաքանում, քրտնում են, շարունակ ունեն հարբուխ, լսողութիւնն օր-օրի վրա Թուլանում է, կամ արդէն շատ ծանր են լսում, Թոքերի բորբոքումից յետոյ մնացել է բրօնխիտ, պլևրիտ, վարակվել են Կոխի բացիլներով, ժառանգական Թոքախտ ունեն,—հրաւիրվում են երեք ամսով մասնակցել առողջապահական զբօսանք-ճաշողքին, որ կայանալու է առաջիկայ յունիսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը։

—

Հիմնովին ուսումնասիրած լինելով այն ռէժիմը, որը ապացուցանում է, Թէ տուբերկլեօզն անպայման բուժելի է, (եթէ սահմանից արդէն չէ անցել) և փորձով համոզված լինելով, որ նշանաւոր և տիեզերահռչակ պրօֆեսօր-բժիշկների դեղօրայքը ոչինչ են համեմատաբար այն հրաշագործ ռէժիմին, որով այժմս բժշկվում են վերև Թւած հիւանդութիւնները՝ ցանկալի է, որ ձեռնհասները օգտվէին մեր երկրից գնացող այս առաջին առողջապահական զբօսանքից։

—

Ճանապարհը II կլաս ճեպընթաց, փառահեղ հաճոյք և անդորրութիւն։

Վճարը երեք ամսվայ համար 1000 ր.։ Սրա մէջ են՝ ճանապարհածախս, ուտելիք, բնակարան, բժիշկ, սանատօրիա, կուրօրտ, զուարճութիւն և հաճոյք, Թատրօն, երաժշտութիւն, մուզէյ, պատկերասրահ, նորութիւններ և այլն և այլն։

Աշխարհատեսութիւն՝ Գերմանիա, Բելգիա, Հօլանդիա, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Տիրօլ և Աւստրիա։ Այս բոլոր երկրների նշանաւոր քաղաքներն ու վայրերը։

50 օր սանատօրիաներում և կուրօրտներում **40** օր զբօսանք, հաճոյք և աշխարհատեսութիւն

Մասնակցել կամեցողները պէտք է մինչև այս մայիսի 20-ը պայմանաւորված լինեն, որովհետև արտօնված տոմսակների Թիւը այդ օրը հաղորդվելու է Լօնդօն և սրանից յետոյ վճարը կարող է շատ մեծ տարբերութիւն անել։

Մանրամասնութիւններն ամեն օր երեկոյեան ժամը 6 և կէսից մինչև 7 և կէսը տեղեկանալ պ. Տիգրան Նազարեանից։

Тифлисъ, Контора редакціи Агбюръ-Таразъ, Мадатовская, 5.

առ. (օրամէջ) 2—10

Վաղը, երկուշաբթի, մայիսի 7-ին

ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

„ՅՈՒՇԱՐԱՐ"

Թատերական-գրական-գեղարուեստական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

երկշաբաթաթերթի **№ 5-ը**

հետեւեալ բովանդակութեամբ.

Հայ բեմը 1906—7 Թ. Թատերաշրջանին։—Խօսեր մեր Թատրօնի մասին։—Հայոց Թատրօնի վերակազմութիւնը։—Թիֆլիսի Դրամատիկ Ընկերութեան ընդհանուր ժողովը։—Եկեղեցի և Թատրօն։—Աշխարհի ցաւը (բանաստեղծութիւն)։—Դէպի Ռուստունին։—Եթէ կաս, Աստուած..։ (բանաստեղծ.)։—Ծիծաղի վարժութիւններ։—Երկու սեզօն Նոր-Նախիջևանում։—«Գիւղաց տատի հեքեաթը»։—Բաղդասար աղբօր նամակները։—Մեր պատկերները։—Նիւթեր հայ Թատրօնի պատմութեան համար։—Լուրեր։—Յայտարարութիւններ։

Նոր բաժանորդները լրիւ կը ստանան լոյս տեսած բոլոր համարներն ու յաւելուածները։

Հասցէն՝ Ред. «Ушараръ», Сергіевск. ул. № 3, Тифлисъ, կամ Rédaction du journal «Houcharar», Tiflis։

առ. 1—1

№ 23 ՀԱՅԵԼԻ № 23

ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ԼՈՅՍ ՉԸ ՏԵՍԱՒ,

որովհետև նկարները ցենզուրայի կողմից արգելվեցին։

Լոյս կը տեսնէ

երկուշաբթի, մայիսի 7-ին։

(շ. կ.) առ. 2—2

Լոյս տեսաւ եւ ծախվում է

ԱՐԵԱՆ ՁԱՅՆԵՐ

երրորդ տպագրութիւն

փոփոխված, ճոխացրած, 224 երես

ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ

Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» և «Փարոս» գրախանութները, Երևան՝ Ս. Օհանջանեանին, Բագու՝ Բունիաթեանցի գրախանութը հայոց եկեղ. կից, Կարս՝ Եղբ. Մկրտումեաններին։

Մեծ քանակութեամբ գնողներին զգալի զեղչ։ Ստ. Մ. Սողոմոնեան, Тифлисъ Успенская ул. № 3.

(ա.օ.) առ. 10—10

Лучшее для зубовъ.
ОДОЛЬ
Цѣна 1 Р. 50 К.

Օդօլով լուացումը, յայտնի գիտնականների ընդհանուր կարծիքով, ներկայումս կատարելապէս համապատասխանում է ատամի առողջապահութեան պահանջներին։

Գինն է ½ շշի, որը բաւականանում է մի քանի ամիս, 1 ր. 50 կ.

առ. (հ. կ.) 2—2

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Խաչանեան

Մեկնեց արտասահման

(ե. հ. կ.) առ. 3—3

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր

ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլեքտրօբուժութիւն։

Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ.։

Ի. Ե. ԱԻԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի հ.։

Մ. Գ. ԿԻՄՕՆՏ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։

Գ. Ա. ԲԷՅԷՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։

Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։

Հիւանդանոցում բժշկվում են հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն։

Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհրդների վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին մէրներից։

առ. ե. հ. կ. 40—100

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Վարչութիւնը

սրանով յայտնում է,

որ էկստերների քննութիւնները տեղի կունենան մայիսի 4-ից մինչեւ 29-ը։ Խնդիրները ընդունվում են միմիայն մինչև ամսիս 10-ը։

(շ. կ.) առ. 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամայացող երկիր. Վերջին տեղեկութիւն. Օգնութեան գործը Մամուլ. Օրվայ խնդիրներ. Թուրքերի կեանքից. Անգլիական հասարակական կարծիքը Ռուսաստանի գործերի մասին. Դումայի շուրջը. Մեռնող ազգութիւն. Ռեթէոս էֆ. Պերպէրեան Մեղրեցու ցաւերից. Թատրօն և երաժշտութիւն. Պետական Դումա. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—Տաճկահայի խեղդված ձայնը։

ԱՄԱՅԱՑՈՂ ԵՐԿԻՐ

I

Ներկայումս 100,000 Թիւրքահայ աքսորական վիճակի մէջ է։

Նրանք զրկված են տուն ու տեղից, հայրենի օջախից և հնարաւորութիւն չունեն իրանց երկիրը վերադառնալու։

Հարիւր-հազար մարդ։

Դա մի սարսափելի մեծ Թիւ է այնպիսի մի ազգի համար, որ հարիւր հազարներով է հաշւում իր քանակը և միլիօնից չէ անցնում իր մայր երկրում։

Արդարև հաշուի առէք Ամերիկայում ցրված 30—35 հազար, Բօլգարիայի և Ռումինիայի սահմաններում գտնվող 15 հազար, Յունական կղզիների, Եգիպտոսի և Պալեստինի շրջանում 15 հազար, վերջապէս Կովկասում և Հարաւային Ռուսաստանում ապաստան գտած 30—35 հազար հայերին և դուք կը ստանաք մի ահագին բազմութիւն, որ կազմում է 100,000 հոգի։

II

Այդ 100,000 հոգին հեռացել են կամ փախել են այն հաստատ յոյսով, որ նրանք պէտք է վերադառնան իրանց հայրենիք, շէնացնեն գիւղերը, բնաւանքներ կազմեն և շարունակեն տեղական տընտեսութիւնը։

Անցնում են տարիներ, բայց ոչ ոք չէ վերադառնում։ Եւ ընդհակառակը՝ պանդխտական կամ վերջիվերջոյ գաղթի վերածված շարժումը ոչ միայն չէ դադարում, այլ և օրէցօր զարգանում է։

Սասունի և նրան յաջորդող դէպքերից յետոյ Թիւրքիայի սահմանները փակվեցին պանդխտութեան գնացած կամ փախուստի դիմած երկրացիների համար։ Ժողովուրդը նուազեց Թէ կոտորածներից, աւերներից և Թէ գաղթից, որը դարձաւ այնուհետև մի քրօնիկական ցաւ երկրի համար։

Անցել են 10—12 տարի, բայց երկիրը դեռ ևս փակ է մնացել իր հարազատ զաւակների վերադարձի համար։

III

Զարհուրելի էր այն մեծ աղէտը, որ բաժին ընկաւ Թիւրքահայերին, երբ տասնեակ հազարներով մարդիկ կոտորվեցին, ամբողջ գիւղական շրջաններ աւերվեցին, միլիօնաւոր հարստութիւններ ոչնչացան։

Չը նայելով այդ անլուր Թշուառութեան՝ երկիրը կարող էր նորից սկսել իր կազդուրման գործը և բուժել իր վէրքերը։ Բայց ինչպէս դարման անել այն ցաւին, երբ երկրի զաւակները վըռնտվում, աքսորվում են երկրից և կորչում մայր հայրենիքի համար։

Թէ Ամերիկայում և Թէ ուրիշ տեղերում ապաստան գտած հայերը մեծ մասամբ երիտասարդ, ամուրի մարդիկ են և նրանց կորչելով պէտք է ազգի ժողովրդական աճումը, զրկելով երկիրը իր բնակիչներից, որոնք և հիմքն են բոլոր զօրաւորութիւնների և տնտեսների։

IV

Ապրելով տասնեակ տարիներով օտար երկրում, կապվելով իրանց պարապմունքներով և ձեռնարկութիւններով նոր երկրի հետ, ընտելանալով աւելի կուլտուրական կեանքի պայմաններին՝ գաղթական մարդը ամրանում և հաստատվում է այդ հողի վրա։ Մայր հայրենիքը դառնում է նրա համար կարօտի, տենչի, իղձերի և փափագների մի առարկայ, բայց ինքը կորցնում է երկիր վերադառնալու պատրաստականութիւնը։

Անմխիթարական է այս դրութիւնը և նրա երկար շարունակվելը կամաց կամաց կամայացնէ այն երկիրը, որտեղից դուրս են եկել նրա զաւակները միայն ժամանակաւոր կերպով, այն մեծ յոյսով, որ պէտք է վերադառնան շուտով և շէնացնեն երկիրը։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

—

Պետերբուրգ, 4 մայիսի.—Պետական Խորհրդի առաջին ատեանը, քննելով ներքին գործերի մինիստրի օգնական Գուրկօյի գործը, համաձայնեց Սենատի օբեր-պրօկուրօրի կարծիքի հետ—Գուրկօյին յանձնելու Սենատի դատարանին իշխանութեան զեղծման համար։

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

I

Թիֆլիսի Նպաստամատոյց Յանձնաժողովը անցեալ շաբաթ բաժանեց Ջիվանշիրի երեք կարօտ գիւղերին Մեծ-Սարօվ, Հասանղայա և Ղազանչի գիւղերին մօտ 2000 րուբլի բամբակի, բրնձի և կորեկի սերմացու ձեռք բերելու համար։

Մեծ-Սարօվը ստացել է 1161 րուբլի, Հասանղայեան 422 րուբլի և Ղազանչին 412 րուբլի։

Նպաստը բաժանվել է չքաւոր դասակարգին։ Իւրաքանչիւր շունչ ստացել է մի րուբլի։ Իսկ առանձին ծխերը 2—14, միջին Թւով 6 րուբլի։

Նպաստը բաժանվել է Թիֆլիսից գնացած յատուկ լիազօր Նազարեանի միջոցով։

Մեծ-սարօվցիները ցանքսեր արել են Թէ նոր գնած Շիխարլու կոչված կալուածքում և Թէ իրանց հին գիւղական հողերում։

Նոր հողը շատ լաւ է իր յատկութեամբ, բայց ջրի պակասութիւն ունի։ Ջրանցքի շինութիւնը դեռ չէ վերջացած և այդ պատճառով վտանգ կայ, որ ցանքսերը փասվեն ջրի պակասութեան պատճառով։

II

Կառավարութեան տրված նպաստները բաժանվել են Թէ հայ և Թէ Թուրք գիւղերի մէջ։

Բաժանումը տեղի է ունեցել երկու անգամ։ Թէ առաջին և Թէ երկրորդ անգամ գիւղացիները ստացել են նպաստը շնչի հաշւով, հետևեալ եղանակով։

Բոլորովին աւերված և կողոպտված գիւղերին նշանակվել է աւելի մեծ նըպաստ, քան քիչ վնասված գիւղերին։

Առաջին տեսակ գիւղերի բնակիչները ստացել են առաջին անգամ 4 րուբլի, իսկ երկրորդ անգամ 7 ր. 50 կոպէկ ամեն մի շնչի վրա։ Իսկ միւս տեսակի գիւղերի բնակիչները ստացել են առաջին անգամ 2, իսկ երկրորդ անգամ 4 րուբլի։

Նպաստը չեն ստացել գիւղի ունեւոր տները։

Առաջին բաժանումը կատարվել է գիւղական յանձնաժողովների ձեռքով և տեղի են ունեցել Թիւրիմացութիւններ, իսկ երկրորդ անգամ գաւառապետը ինքը անձամբ շրջել է և իր հսկողութեամբ բաժանել։

Ա. Ք.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մայիսի։ Ագրարային մասնաժողովի նախագահ ընտրվեց ժող. սօցիալիստ Վօլկ Կարաչևսկին, քարտուղար՝ լեհական կօլօյի անդամ Խօմինսկին։

Խղճի ազատութեան հարցով զբաղվող դումայական մասնաժողովը, լսելով ճախակողմեանների մտցրած զեկուցումը եկեղեցին պետութիւնից բաժանելու մասին, հարցը անքննելի համարեց և բաւականացաւ կառավարական օրինագծերը քննելով։

Այս կամ այն դաւանութեան հետ կապված սահմանափակումները վերացնելու օրինագծը քննութեան ենթարկելով դումայական մասնաժողովը, որոշեց վերացնել հրէաների իրաւունքների նկատմամբ եղած սահմանափակումները, որովհետև այդ սահմանափակումները, ինչպէս յայտնի է սենատի գործերից, կրում են սոսկ դաւանական և ոչ Թէ ազգային-քաղաքական բնաւորութիւն։

ՄԱՄՈՒԼ

—

Ինչպէս յայտնի է, կառավարութիւնը Թոյլ չը տուեց ռուսաց սօց.-դեմօկրատներին համագումար հրաւիրել Ռուսաստանի սահմաններում, այդ պատճառով նրանք ստիպված եղան արտասահմանում հաւաքվել։ Այդ առիթով ռուսական առաջադէմ մամուլը բաւականին յօդուածներ է նուիրում։ Նոյն խնդրի մասին խօսելով «Парусъ» լրագիրը՝ այն միտքն է յայտնում, որ հիասթափեցնող ազդեցութիւն կունենային համագումարի աշխատանքները, եթէ նրանք տեղի ունենային Ռուսաստանի մէջ։

Սօցիալ-դեմօկրատիան,—ասում է «Парусъ»-ը—Արևմուտքում ամեն տեղ էլ համարվում է «պարլամենտական» կուսակցութիւն։ Մեզանում, արտաքին քաղաքական պայմանների շնորհիւ, ներկայումս իր էութեամբ հանդիսանում է ոչ պարլամենտական կուսակցութիւն։ Կռիւը պրօլետարիատից և նրա պարլամենտական ներկայացուցիչներից յեղափոխական ատամը,—դա նախ և առաջ իրա կառավարութեան շահն է պահանջում։ Կռվել նրան բռնութեամբ, ոստիկանական միջոցներով—միանգամայն անհնարին է և անիրագործելի, ինչպէս որ այդ ցոյց տուեց Գերմանիայի և Ռուսաստանի օրինակը։

Հետևապէս մի ճանապարհ է մնում.—այդ կուսակցութեան համար ստեղծել հնարաւորութիւն հանգիստ կերպով կշռադատելու և գնահատելու այն պայմանները, որոնց մէջ նրան վիճակված է գործել, իր տակտիկական հիմնական սկզբունքները ենթարկել ինքնաքննադատութեան, յոյս ունենալ, որ նպատակայարմար կերպով կընթանան պարլամենտական աշխատանքները և պարլամենտից դուրս խաղաղ կռիւը։ Այդ կուսակցութեան մէջ զգաստ, լրջախոհ, ըէալ տրամադրութիւն ունեցող տարրեր շատ կան, մանաւանդ աւելի շատ կան ժողովրդական, պրօլետարական մասսաներում։ Բայց նրանք երբեք չեն կարող դեր խաղալ, քանի կուսակցութիւնը հալածանքի մէջ է, գործում է գաղտնի կերպով։ Կառավարութեանը անյայտ չէ, որ այն համագումարը, որի աշխատանքներին նա արգելք է հանդիսանում, պէտք է վճռող ազդեցութիւն ունենայ կուսակցութեան տակտիկայի վրա Ռուսաստանում. Նրան չէ կարող անյայտ լինել և այն, որ համագումարում իրար հետ համեմատվելու, հակադրվելու են երկու ուղղութիւն, որը ներկայումս բաժանում է այդ կուսակցութիւնը, որ նրանցից իւրաքանչիւրը ջանք է գործ դընելու անցկացնելու իր բանաձևը։ Անկասկած է, որ Դանիայի մէջ կատարվող անցքերի պատճառով ծայրայեղ յեղափոխական ֆրակցեայի յաղթանակելու շանսերը մեծ են։ Նպատակայարմարութեան տեսակէտից՝ այդ քայլը անկասկած սխալ է։

Մեր կարծիքով կուսակցական համագումարները արգելելը, նրանց դէմ կռիւ մղելը ամեն տեղ և ամեն պայմաններում բիւրօկրատական քաղաքական կարճատեսութեան արդիւնքն է։ Նրա համար, ինչպէս երևում է, անհասկանալի է այն զգաստացուցիչ ու չափաւորող ազդեցութիւնը, որ ունենում է կուսակցութեան վրա ժողովրդական լայն մասսաների ընդարձակ կարիքների բացարձակ և ազատ քննութիւնը, ծրագրային և տակտիկական պրինցիպների քննութիւնը, կատարելով ոչ գաղտնի, ոչ առանձնացած, այլ ամենքի աչքի առաջ, այն գիտակցութեամբ, որ պատասխանատու են իրանց լիազօրութիւն տուող ազգաբնակութեան առջև, ազատ քննադատութեան ազդեցութեան տակ։

Նոյնանման կարծիք է յայտնում և «Рѣчь» լրագիրը, աւելացնելով, որ սօցիալ-դեմօկրատների վերաբերմունքը մեր ներկայ հիմնական օրէնքներին այնքան բացասական բնաւորութիւն չէ կրում, որքան միապետականների հայեացքները, որոնց համագումարը այնուամենայնիւ կառավարութիւնը Թոյլատրեց Մոսկվայում։

*

Շուրջբալտեան երկրի գերմանացիների մէջ վերջին ժամանակներս, ինչպէս հաղորդում են լրագիրները, վտանգաւոր տրամադրութիւն, նոյն իսկ շարժումն է նկատվում։ Նրանք հետզհետէ խզում են իրանց յարաբերութիւնները տեղական բնիկ ազգաբնակութեան հետ, որոնց մեծ մասը բաղկացած է լատիշներից։ Իրանց մօտ աշխատող լատիշ ծառաներին և բատրակներին հեռացնում են և նրանց փոխարէն ընդունում գերմանացիներ, բաց են անում մի շարք դպրոցներ, ուր բացի գերմանացիներից ոչ մի ազգութիւն չեն ընդունում, շատ տեղերում գերմանացիները ուղղակի բօյկօտի են ենթարկում լատիշ վաճառականներին, արհեստաւորներին և գնում են բացառապէս գերմանացիներից։ Նոյն երևոյթը նկատվում է հասարակական կեանքի բոլոր ճիւղերի մէջ և պարզ կերպով երևում է, որ գերմանացիները ներկայումս այնտեղ առաջնորդվում են գերմանական ազգայնամոլութեամբ և յանուն՝ «Շուրջբալտեան երկիրը գերմանացիների համար» դեվիզի, գերմանացիներին անջատում են բնիկներից։ Լատիշական «Balss» լրագիրը, որ ամենաազդեցիկ ու ղեկավարող օրգանն է համարվում, իր վերջին համարներից մէկում տպագրել է հետևեալ բնորոշ տողերը.

Լատիշ գիւղացին ստիպված էր լաւութեամբ տանել այս տարին, բայց նա նրան չէ կարող մոռանալ։ Մեր ապագայ սերունդներն անգամ կը պատմեն իրանց զաւակներին այս սարսափելի տարվայ մասին և դողդոջուն ձեռքերով ցոյց կը տան այն կողմը, որտեղից հասել է մեզ այդ արհաւիրքն ու տանջանքը—դէպի ազնուականների կալուածքները։ Եթէ համառօտ խօսքերով բնորոշելու լինենք ժողովրդի ներկայ հոգեկան վիճակը, պէտք է ասենք, որ նա ոչ մի ապստամբութեան, ոչ մի բռնութեան մասին չէ էլ մտածում. բայց այն Թշնամութիւնը, որ եղել է մինչև այժմ լատիշների ու գերմանացիների միջև, ներկայումս աւելի սաստիկ է, ուժեղ և զգալի, քան երբևիցէ եղել է։ Վաղ Թէ ուշ, բայց մեր հանգամանքները կը դասաւորվին ոչ այնպէս, ինչպէս ուզում է տեղական ազգաբնակութեան 7 տոկոսը, այլ 93 տոկոսը։ Եւ որքան զօրեղ կը լինի մեծամասնութեան Թշնամական վերաբերմունքը դէպի փոքրամասնութիւնը, այնքան քիչ դեր կը խաղայ այս վերջինս ապագայում։ Այդպէս է լինելու մեր ազնուականների քաղաքականութեան անխուսափելի հետևանքը, այդ է լինելու իր ներկայ գործելակերպի ապագայ արդիւնքը։

Այդ էլ Շուրջբալտեան երկրի ներկայ իրական պատկերը։ Զարմանալին այդտեղ այնքան գերմանական ազգայնամոլ քաղաքականութիւնը չէ, այլ այն դերը, որ բռնել է ինքը կառավարութիւնը։ Նա փոխանակ հաւասարապէս պաշտպանելու տեղական ազգաբնակութեան շահերը, խունկ է ծխում գերմանական բարօնների առաջ։

ՕՐՎԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ
XVI

Ժամանակակից հասարակական կարգերը օրըստօրէ քայքայվում, կազմալուծվում են կեանքի մէջ տեղի ունեցող քաղաքական և սօցիալական կատաղի կռւի շնորհիւ, և այսօր իբրև մի անյետաձգելի անհրաժեշտութիւն կանգնել է ասպարէզի վրա նոր կարգեր ստեղծելու խնդիրը:

Ամեն կողմից, ժողովրդի լայն խաւերից լսվում է մի պահանջ՝ արմատական բարեփոխութեան ենթարկել կեանքը իր բոլոր կարգ ու կանոններով. սակայն արմատական բարեփոխութիւնը, եթէ ուզում ենք որ լինի ռամկավարական, համապատասխանէ ազգաբնակութեան լայն խաւերի շահերին ու ձգտումներին, անհրաժեշտ է, որ ամբողջ ազգաբնակութիւնը ակտիւ մասնակցութիւն ունենայ այդ գործում, այլ ոչ նրա արտօնեալ մասը, փոքրամասնութիւնը:

Այսօր մի այդպիսի բարդ և պատասխանատու պարտականութիւն է դրված ներկայ սերնդի վրա, որը իր մասսայով անպատրաստ է կրթութեամբ, ագէտ է և զուրկ տարրական ամենաանհրաժեշտ գիտելիքներից, նոյն իսկ գրագիտութիւնից:

Օրվայ ամենահրեթական խնդիրը ժողովրդին նախապատրաստելու՝ այդ տարրական գիտելիքներով զինելու գործն է:

Ո՞վ պէտք է հոգայ այդ մասին, եթէ ոչ արդէն ինտելիգենտ երիտասարդութիւնը, լինի նա յեղափոխական թէ ոչ-յեղափոխական, այդ միևնոյն է, որովհետև մասսայի նախապատրաստութեան գործը ժողովրդական շահերի տեսակէտից անպայման պէտք է ընթանայ էվօլիւցիայի ճանապարհով: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ այդ երիտասարդութիւնը ստուգութեան ենթարկէ զանազան քաղաքական պրօբլէմները և համախմբվի յայտնի ճշմարտութիւնների ու իրական օգտակար գործունէութիւնների շուրջը, նպատակ ունենալով բարձրացնել մասսայի զարգացման մակերևոյթը և ըմբռնելի դարձնել նրա համար տարրական գիտելիքներն ու ճշմարտութիւնները:

Այդ անհրաժեշտութիւնը մանաւանդ զգալի է դառնում այն ժամանակ, երբ աւելի ենք մօտենում ժողովրդի ստորին խաւերին, երբ սերտ շփւում ենք ունենում գիւղական ազգաբնակութեան հետ: Սխալ է կարծել, որ այդ տեսակ խաղաղ, կուլտուրական գործունէութեան համար խիստ խոչընդոտներ կը յարուցանեն:

Մեր աչքի առաջ այսօր ազատ կերպով սկսել է իր գործունէութիւնը ժողովրդական համալսարանը Թիֆլիսում: Միթէ հնարաւորութիւն չի լինի նոյնը մօտաւորապէս կազմակերպել և միւս քաղաքներում—Ալէքսանդրօպօլում, Երևանում և այլն:

Բարեբաղդաբար դրա համար յայտնի չափով դիւրութիւններ են ստեղծված: Մեր ընթերցողները «Մշակ»-ի № 91-ի մէջ անշուշտ կարդացին ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան նորերս հրատարակած չափահասների համար դասեր ու դասընթացքներ հիմնելու նոր կանոնադրութիւնը, որ բաւականաչափ հնարաւորութիւն է տալիս տարածելու ժողովրդի լայն խաւերի մէջ ոչ միայն գրագիտութիւնը, որ մեզանում շատ և շատ յետ է մնացել, այլ և լայն ծաւալով օգտակար գիտելիքներ:

Այդպիսի դպրոցներ բանալու, ինչպէս յիշված է կանոնադրութեան մէջ, իրաւունք ունեն հասարակական հաստատութիւնները և նոյնիսկ առանձին անհատները: Յիշեալ կանոնների մէջ կայ միայն մի աննպաստ հանգամանք, այդ այն է, որ դպրոցները բանալու համար պէտք է նախապէս թոյլտուութիւն ստանալ ուսումնարանական իշխանութիւնից: Մինչդեռ այդ հանգամանքը կարող է անտեղի ու կամայական արգելքներ ստեղծել գործի աջողութեան առաջ:

Չափահասների դպրոցական կրթութեան գործը կարող էր մեծ օգուտ տալ, եթէ նա դրված լինէր ազատ հողի վրա, զերծ զանազան քմահաճոյքներից ու պատահականութիւններից, մանաւանդ, ինչպէս շատ ճիշտ նկատում է «Р. В.» լրագիրը, եթէ նրա բացման համար էլ սահմանված լինէր եավօչնի կարգը, ինչպէս որ այդ ընդունված է հրապարակական ժողովրդական ընթերցանութիւնների համար:

Յամենայն դէպս այդ նոր կանոնադրութիւնը հնարաւորութիւն է տալիս գործելու այդ ուղղութեամբ, հնարաւորութիւն է տալիս դրա համար բանալ մեծ թւով այդ տեսակի դպրոցներ և պէտք է օգուտ քաղել նպաստաւոր հանգամանքից ու հէնց այժմեանից սկսել գործը:

[illegible] որոնք նպատակ են դրել ժողովրդի բարօրութիւնը և կռիւ են մղում դրա առաջ կանգնած խոչընդոտների ու ամենամեծ չարիքի—ժողովրդի տգիտութեան դէմ, չը պէտք է անուշադիր թողնեն այդ իրական կարևոր զէնքը, որ աւելի ճիշտ ճանապարհով է տանում մեզ դէպի կատարեալ յաղթանակը:

Կեանքը անիմաստ չէ, և եթէ նա կռիւ է, այդ կռիւն էլ ուրեմն անիմաստ չէ, այդ պատճառով պէտք է նա լաւ կշռադատված լինի ու խելացի կերպով նախամտածված:

Քանի՜-քանի՜ անգամ լսել ենք մարտահրաւէրներ անհաւասար կամ անյայտ, մինչև իսկ, տարերային ոյժերի դէմ, չը նայելով, որ պարտութիւնը եղել է ակներև: Յափշտակված խաբուսիկ ցնորքներով ու հեռանկարներով, մենք անուշադրութեան ենք մատնել կեանքը իր անողոք և անպաճոյճ իրականութեամբ, առանց լուրջ հաշիւ տալու մեզ, առանց պատասխանատւութիւն զգալու այն բոլորի համար, որոնց հեղինակները առհասարակ լինում են մի խումբ անհատներ, իսկ տուժողը՝ ամբողջ ժողովուրդը:

Ի՞նչ արդարութիւն է անհատների մտածողութեան և տակտիկայի հետևանքները փաթթել ժողովրդի շլինքին: Ինչու նա ինքը չը պէտք է տնօրինէ իր գործերը, այլ մի քանի անհատներ:

Որովհետև նա դեռ անպատրաստ է դրա համար և ագէտ:

Փարատենք նրա տգիտութեան խաւարը, նախապատրաստենք նրան ինքնօգնութեան և ինքնավարութեան համար հէնց այդ տեսակի դպրոցներով:

Նա կարևոր զէնք է, եթէ միայն կարողանանք գործադրել նրան խելացի կերպով:

Եւ որքան շուտ, այնքան լաւ:

Լ. Դանիէլեան

ԹՈՒՐՔԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Մայիսի 2-ին, Բաքւում Հ. Զ. Աբեդին Թաղիեվի հաշւով պահվող Թուրք աղջկանց դպրոցի քննութիւնները կատարվել են բազմաթիւ հանդիսականների և մահմեդական հոգևորականութեան ներկայութեամբ: Թուրք միլիօնատէրը, ինչպէս հաղորդում է «Թազա-Հայաթը», որոշել է առաջիկայ սեպտեմբերից նոյն դպրոցում հիմնել մանկավարժական կուրսեր, որպէս զի շրջանաւարտ Թրքուհիները պատրաստվեն ուսուցչութեան:

—Ինչպէս յայտնի է, գոյութիւն ունի «Մահմեդական Միութիւն» անունով մի մարմին, որը Նիժնի-Նովգորոդում տեղի ունեցած համագումարից յետոյ Ռուսաստանի մահմեդականների ընդհանուր գործերն է վարում: Այդ Միութիւնը գործում է Պետական Դումայի մահմեդական ֆրակցիայի հետ համախորհուրդ: Ահա այդ Միութեան վարչութեան 14 անդամները Պետերբուրգում ժողով կայացնելով՝ խորհրդակցեցին Միութեան գործերի և գործելակերպի մասին, Պետական Դումայի մահմեդական պատգամաւորների հետ: Միութեան վարչութեան անդամներ են.—Սէյիդ Գիրէյ Ալկին, Ալի Մարդան-բէգ Թօփչիբաշեվ, Մօլլա Աբդուլլահ Ափանդիեվ, Եուսուֆ Ակչուրա, Ֆաթիհ Քէրիմով, Զիաթխանով, Աբդուլ Ռէշիդ Իբրահիմով, Սադրէդդին Մաքսուտով, Մուսա Բէգիեվ, Սիրթլանով, Կուշչիղուլով:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

«Русск. Вѣд.» թերթի Լօնդօնի յատուկ թղթակիցը, մի շարք թերթերից, մանաւանդ պահպանողական թերթերից զանազան հատուածներ բերելով, ցոյց է տալիս, թէ ո՛րպիսի փոփոխութեան է ենթարկվել անգլիական հասարակաց կարծիքը Ռուսական գործերի վերաբերեալ այս վերջին երկու ամսվայ ընթացքում, այսինքն Պետական Դումայի գումարման օրից ի վեր:

«Պետական Դումայի ընտրութիւններից առաջ,—ասում է թղթակիցը,—անգլիական ազդեցիկ մամուլի վերաբերմունքը դէպի Ռուսաստանի գործերը, շատ քիչ բացառութեամբ, հետևեալ կերպով էր ձևակերպվում. Ռուսաստանում ուժեղ կառավարութիւն կայ, որի գըլխին հիմա լիբերալ պրեմիէր է կանգնած, որը մի շարք գեղեցիկ ռեֆօրմներ է նախագծել, սակայն նա յեղափոխութեան կրքերից կուրացածների կողմից դիմադրութեան է հանդիպում: Յեղափոխականների շարքն էին դասվում ոչ միայն սօցիալիստական կուսակցութիւնները—աւելացնում է իր կողմից յարգելի ռուս թերթի թղթակիցը,—այլ և սահմանադրական-ռամկավարականներն էլ»:

Եւ ռուսաց կառավարութեան բարեկամ «Daily Telegraph» ու «Daily Maili» թերթերը այն ժամանակ շարունակ այն միտքն են արծարծելիս եղել, թէ այդ բոլոր «յեղափոխականները ցանկանում են ամեն ինչ խորտակել և անարխիա ու արիւնալից բարեկենդան ստեղծել»:

«Պէտք է ասել,—շարունակում է թղթակիցը,—որ այն ժամանակ էլ երբեմն ուղիղ գնահատութիւն էր անվում մինիստրական դեկլարացիային այնպիսի չափաւոր թերթերում, ինչպիսին է պահպանողական «Morning Pots»-ը: «Խոստացված ռեֆօրմները,—գրում էր այդ թերթը,—ինքնըստինքեան շատ լաւն են: Հազիւ թէ կարիք կայ «Habeas corpus»-ի մեծ նշանակութիւնը բացատրել: Միայն թէ հարց է առաջ գալիս, թէ ինչպէս կարող են այդ բոլոր ռեֆօրմները իրագործվել, առանց պատասխանատու կառավարութեան: Քանի որ Ռուսաստանում պատասխանատու մինիստրութիւն չը կայ, քանի որ նա կը կառավարվի մի շարք աւտօկրատ-նահանգապետներով, այդ ռեֆօրմները միմիայն միրաժ կը լինեն: Ռեֆօրմներ տալը հիմնված է «եթէ» և «բայց»-ի վրա: «Եթէ» այդ այն պայմանն է, որ նախ հանգստութիւն տիրէ երկրում. «բայց»-ը այն առարկութիւնն է, որ ժողովրդային խլրտումներ ծագելուն պէս, «Habeas corpus»-ի ազդեցութիւնը վերացվում է: Վերջին կէտը գերմանական սահմանադրութեան մէջ էլ կայ, բայց որովհետև «ժողովրդային խլրտումները» Ռուսաստանի նորմալ դրութիւնն են ներկայացնում, ուստի ռեֆօրմներ խոստանալը միայն դեռ բոլորովին բաւական չէ»: Այդ նոյն պահպանողական լրագիրը իր ընթերցողներին մի այսպիսի հանելուկ առաջարկեց. «Ի՞նչպիսի կառավարչական ձև կայ այժմ Ռուսաստանում: Մի կողմից մեր առաջ ինքն իշխանութիւնն է կանգնած, որը կարող է օրէնքներ հրատարակել, երբ Դումա չը կայ, իսկ միւս կողմից կայ Դումա, առանց որի հաւանութեան ոչ մի օրէնք չէ կարող անցնել, բայց և որին արգելված է կառավարութեանը պախարակութեան քուէ տալ: Ի՞նչպիսի կառավարչական ձև է ուրեմն Ռուսաստանում. աւտօկրատակա՞ն, թէ սահմանադրական»:

Նշանաւոր «Times» թերթը, որ միշտ շատ ուշի ուշով է հետևում ռուսական գործերին և տեղեակ է նրանց, թղթակցի ասելով, Պետական Դումայի նիստերը սկսվելուց առաջ յանկարծ փոխում է իր վերաբերմունքը դէպի մեր երկրի ազատագրական շարժումները և սկսում է խիստ թշնամաբար վերաբերվել նոյնիսկ դէպի կադետները: Բայց ահա սկըսվում են Դումայի նիստերը և անգլիական մամուլի ու հասարակութեան համար սկսում է պարզվել երկրի իսկական դրութիւնը:

«Մի շարք փաստեր, որոնք պարզվեցին Դումայի նիստերի ժամանակ, ցոյց տուեցին Անգլիային, որ «արիւնալից բարեկենդանի» մասին մտածում է միմիայն այն միութիւնը, որը կառավարութեան հովանու տակ այնպիսի սոսկալի ու եւրօպացու համար անհաւատալի գործեր է կատարում, որ կատարեալ անարխիա ներկայացնում է իրանից միմիայն հէնց ինքը կառավարչական սիստեմը, որի շնորհով խաղաղ քաղաքացիների կեանքն ու ազատութիւնը յանձնված է դահճէկեան տիպի ադմինիստրատօրների կամ ուղղակի հոգեպէս հիւանդ մարդկանց ձեռքը: Լոյս աշխարհ հանվեցին ադմինիստրացիայի կամքին հնազանդվող ու արդարադատութեան մինիստրի կողմից պաշտօնանկ եղող դատաւորների մասին եղած փաստերը, հրապարակ հանվեցին բանտային հաստ պատերի ետևում կատարվող դէպքերն ու տանջանքները, և ահա հասարակութեան ու մամուլի վերաբերմունքը դէպի Դուման վճռականապէս փոխվում է»:

Տրամադրութիւնների խիստ փոփոխութիւնը ակնյայտնի կերպով արտայայտվում է պրօֆեսօր Մարտէնսի հռչակաւոր նամակից յետոյ: «Մշակի» ընթերցողները անշուշտ յիշում են այդ նամակի բովանդակութիւնը, որի մէջ Մարտէնսը խիստ յարձակվում էր գործել Պետական Դումայի վրա, անուանելով նրան «անկարող» մարդկանց մի ժողովածու: Այդ նամակը, որ լոյս տեսաւ «Times» թերթում և որ նպատակ ունէր անգլիական հասարակաց կարծիքը Դումայի դէմ ուղղել, ճիշտ հակառակ ազդեցութիւն է ունեցել. այդ նամակից յետոյ թէ «Times»-ը և թէ ամբողջ անգլիական մամուլը իր հովանու տակ են վերցնում մեր Պետական Դուման և սկսում են խիստ կերպով պաշտպանել նրան:

«Մինչև հիմա դեռ ևս ոչ մի պարլամենտ չէ եղել,—գրում է պահպանողական «Morning Post»-ը,—որտեղ ոչ ոք աւելորդ ճառեր արտասանած չը լինի: Այդպիսի պարլամենտ հնարաւոր կը լինէր այն ժամանակ միայն, երբ մարդիկ բացարձակապէս միակերպ մտածեն, սակայն, դա գուցէ կարելի կը լինի միմիայն ոսկէ դարում: Եւ եթէ պարլամենտները ցրւէին միմիայն նրա համար, որ նրանք բաւականաչափ արագութեամբ օրէնքներ չեն մշակում, այն ժամանակ ոչ մի ներկայացուցչական ժողով չէր կարող Եւրօպայում գոյութիւն ունենալ»:

«Իսկ պրօֆ. Մարտէնսի կողմից կադետների մասին արված մեղադրանքների առիթով,—ասում է «Русск. Вѣд.»-ի թղթակիցը,—անգլիական մամուլը հարց է տալիս, թէ ո՛վքեր են կադետները և հետևեալ կերպով է պատասխանում այդ հարցին. «Եթէ ռուսական դրաման տեղի ունենար Անգլիայում, եթէ Անգլիան էլ զինուորական նահանգապետներով կառավարվէր, ինչպէս XVII-րդ դարի կէսում, և եթէ այդ սիստեմը աւելի ևս բարդվէր բիւրօկրատիական այնպիսի մեքենայով, որի գլխում թագի կողմից նշանակված մինիստրներ լինէին կանգնած, այն ժամանակ մեզանում կադետներ կը լինէին Բալֆօուրն ու Ասկիտը, լօրդ Լանսդօունն ու Ուինստոն Չըրչիլը, Չէմբէրլէնն ու Հալդէն: Որովհետև դրանք բոլորն էլ կողմնակից են, որ պարլամենտի կոնտրօլին ենթարկվեն բիւջէտն ու ադմինիստրացիայի գործունէութիւնը, ուստի դրանք չէին կարող ուրիշ կուսակցութեան պատկանել, բացի կադետային կուսակցութիւնից»: Այսպիսի հայեացքների համաձայն էլ, ամեն անգամ, երբ Անգլիայում լուր էր ստացվում Դուման «ցրւելու» մասին, մամուլն ու հասարակութիւնը խիստ կշտամբանքով էին վերաբերվում կառավարութեանը: Այդ ժամանակ ռուսաց արժեթղթերը իսկոյն ընկնում էին բիրժայում և նրանք կրկին բարձրանում էին, երբ լուր էր ստացվում, թէ Դուման չը պիտի ցրւի: Պրօֆէսօր Մարտէնսի նամակը ռուսաց թղթերի գինը գցեց $1\frac{1}{4}$-ով: Երբ հեռագիր ստացվեց, թէ պ. պ. Դուրնովօ, Պիխնօ և Կուրլօվ մինիստրական պօրտֆէյլներ պիտի ստանան, թղթերը նոյնպէս ընկան: Գօլովինի Ցարսկոյէ-Սէլօում ընդունվելը թղթերի գները այնքան բարձրացրին, որքան որ նրանց գցել էր պրօֆ. Մարտէնսը:

«Անգլիայում զարմանում են,—շարունակում է թղթակիցը,—որ այնպիսի չնչին պատճառներով ոչ միայն ճնշումն են բանեցնում Դումայի վրա, այլև կամենում են պետական յեղաշրջում առաջացնել: Ի՞նչպէս կարող է կառավարութիւնը յարգանք պահանջել դէպի օրէնքը, քանի որ հէնց ինքն է առիթներ փնտռում հիմնական օրէնքները խախտելու համար: Ի՞նչ բաներ են խօսքի ազատութիւնը և պատգամաւորների անձեռնմխելիութիւնը պարլամենտում արտասանված ճառերի համար, եթէ մի պատգամաւորի թէկուզ սխալ ու խիստ ձևով արտայայտած կարծիքը կարող է առիթ ծառայել պարլամենտի վրա բռնութիւն գործ դնելու համար:—Ահա, այս կարգի հարցումներ են տրվում անգլիական մամուլում: Բուրերի հետ եղած պատերազմի ժամանակ իռլանդացիները պարլամենտում մեղադրում էին անգլիական զօրքը, որ նա դաժանաբարոյ կերպով էր վարվում կանանց և երեխաների հետ: Սվիֆտ-Մակ-Նէյլ, Ջօն-Դիլլօն և Ուիլլեամ Օ'բրայան այնպիսի ճառեր արտասանեցին, որոնց խստութեան առաջ նսեմանում են կովկասեան պատգամաւորի բերնից անզգուշութեամբ դուրս թռած խօսքերը: Լլօյդ-Ջօրջ և Ջօն Բրօրնսը այն ժամանակ պատերազմը շարունակելու համար նոր գումարներ տալու հակառակ քուէարկեցին, համարելով նրան «յանցաւոր և աւերող»: Սվիֆտ-Մակ-Նէյլի պարլամենտում արտասանած խիստ խօսքերը ահագին փոթորիկներ բարձրացրին, սակայն զինուորական մինիստրը չը պահանջեց, որ պարլամենտը ցրւի: Իսկ այն ժամանակ կառավարութեան ղեկը պահպանողական մինիստրութեան ձեռքումն էր: Ինչ վերաբերում է Լլօյդ-Ջօրջին ու Ջօն-Բրօրնսին, նրանք այժմ մինիստրներ են և կաբինէտի անդամներ:

«Ինչ վերաբերում է այն անգլիացիներին, որոնք, «Times»-ի խօսքերով ասած, «Ռուսաստանի ֆինանսական վերածնութիւնով են շահագրգռված» և որոնց բարեկամութիւնը, ըստ երևոյթին, մասնաւորապէս շատ է գնահատում ռուս կառավարութիւնը, այդ դասակարգի կարծիքը արտայայտող մամուլը շատ անգամներ է դիպլօմատիական, բայց բոլորովին պարզ լեզուով յայտնել, որ նա միմիայն Դումային է վստահանում: Անգլիայում այժմ շատ ճիշտ հասկացողութիւն ունեն ոչ միայն Ռուսաստանի ֆինանսների, այլև հաշւեկշիռներ կազմելու եղանակների մասին: Առանց Դումայի հաւանութեան, ըստ երևոյթին, անգլիական ֆինանսական շուկան փակված է ռուսաց կառավարութեան համար»:

Խ.

ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Ի նկատի առնելով, որ Պետական Դումայի բիւջէտային մասնաժողովը այն կարծիքն է յայտնել, որ ֆինանսների մինիստրութեան գործակալները արտասահմանում բոլորովին աւելորդ են, մինիստրութիւնը մօտ օրերս կը սկսի կերպարանափոխել ֆինանսական գործակալութեան կազմը: («П.»)

—Ժանդարմների վարչութեանը առաջարկված է պարզել, թէ Դումայի անդամ ընտրըված պատգամաւորները ինչ մականուն են կրում եղել առաջ:

—Դումայի համար ամենամեծ վտանգը առաջիկայում համարվում է լեհական ինքնավարութիւնը և ամնիստիան: («Ю. Кр.»)

—«Рѣчь» լրագիրը հաղորդում է, որ արտաքին փոխառութեան գործը առայժմ ձգձգվում է: Դումայի անորոշ վիճակը և աշնանացանի մասին ստացված տեղեկութիւնները հարկադրում են ֆրանսիական կապիտալիստներին առայժմ սպասողական դիրք բռնել:

—«Моск. Вѣд.» լրագրի մէջ գեներալ Բիադնովը պատմում է Բօրիս Նիկօլսկու դասախօսութեան մասին, որ տեղի է ունեցել Մոսկվայի կադետական կօրպուսի շինութեան մէջ: Դասախօսութեան նիւթը եղել է. «Կա՞յ արդեօք Ռուսաստանում սահմանադրութիւն»: Կօրպուսի աշակերտները, գեն. Բիադնովի ասելով, «ուսաններով ու ձեռքերի վրա դուրս տարան տաղանդաւոր ճառախօսին»: «Ամենքին դուր եկաւ մանաւանդ նրա արած համեմատութիւնը Դումայի ուռոյցքների միջև,—շարունակում է Բիադնովը,—որոնցից մէկը արդէն հասել ու պատռվել է, իսկ միւսը դեռ նոր է հասնում»: Այդ առիթով «Рѣчь»-ը ասում է. «Այդպէս ուրեմն, քաղաքական ագիտացիան Դումայի դէմ առաջ է տարվում ոչ միայն օֆիցերների, այլև զինուորների մէջ.—այժմ էլ նա փոխադրված է արդէն կադետների կօրպուսը: Հետաքրքիր էր իմանալ, ինչպէս է վերաբերվում զինուորական մինիստրութիւնը այն բացարձակ ագիտացիային, որ մղվում է դպրոցներում ընդդէմ կայսրութեան օրէնսդրական հաստատութեան: Թէ՞ այդ ագիտացիան էլ պատկանում է այն օրինականութեան թւին, որին ուզում է հետևել ներկայ կաբինէտը»:

—Իվան Պետրունկևիչը (կադետ) «Бирж. Вѣд.» լրագրի թղթակցի հետ խօսելու ժամանակ ասել է, որ Գօլովինի վարմունքի մէջ Զուրաբեանի ինցիդենտի առիթով ոչ մի նուաստացուցիչ բան չը կայ: Գօլովինը բաւարարութիւն է տուել ոչ թէ մինիստրին, այլ զօրքին: Պետրունկևիչը շօշափել է Նիկօլսկու դասախօսութեան հարցը ևս, և ասել է, որ անհրաժեշտ է հակազդել դրան, որովհետև չէ կարելի թոյլ տալ, որպէսզի անուանարկեն Դուման: Այնուհետև Պետրունկևիչը աւելացրել է, որ այժմ, զօրքին լիակատար բաւարարութիւն տալուց յետոյ, Գօլովինը միանգամայն հնարաւորութիւն ունի այցելելու Բեզգիերին և նրա ուշադրութիւնը դարձնելու այդ տեսակ փաստերի անթոյլատրելիութեան վրա: («К. М.»)

ՄԵՌՆՈՂ ԱԶԳՈՒԹԻՒՆ
II

Մի ժողովրդի կեանքի երևոյթները լաւ հասկանալու համար պէտք է նախ և առաջ քննել նրա դասակարգային կազմուածքը, նրա իւրաքանչիւր դասակարգի տնտեսական-մտաւոր էութիւնը: Անշուշտ մի լրագրական յօդուածում ես չեմ ուզում տրակտատ կամ հետազօտութիւն գրել, այլ՝ ընդհանուր բնորոշ գծերով պատկերացնել «հայութեան» կազմուածքը. աւելի մանրամասն և մանրակրկիտ ուսումնասիրութիւնը միայն կարող էր զարգացնել մեր իրականութեան մէջ նըշմարած գծերը:

Պէտք է նկատել, որ մեր իրականութեան հետ ծանօթանալիս երբեք չը պէտք է ղեկավարվել այն շինծու, կեղծ, չափազանցրած, խեղաթիւրած «տեղեկութիւններով», որ տարիներ շարունակ հրապարակ են նետել Հընչակ—դաշնակցական «յեղափոխական» օրգանները, ցանկանալով այդ հարայ-հրոցներով, յոխորտական կառանչներով և մոլորեցնող սրախօսութիւններով նպաստաւոր հող ստեղծել իրանց աւանտիւրիստական էքսպերիմենտների համար: Դէպի այդ «աղբիւրները» պէտք է վերաբերվել կատարեալ թերահաւատութեամբ: Ես ինքս ականատես եմ եղել թէ ինչպէս են լուրեր թխում և խմբագրում մեր «յեղափոխական» թերթը—«ժողովրդի տրամադրութիւնը միշտ վառ և լարված պահելու նպատակով»... Թերթերը այսօր էլ ունեն յատուկ նպատակ — միշտ անշէջ պահել միամիտ ժողովրդի յոյսը դէպի այդ կազմակերպութիւնների փրկարար գործունէութիւնը և փող կորզել գլխաւորաբար այդ «կազմակերպութիւնների» արտասահմանեան վարիչներին ապրեցնելու համար: Պարզ է, որ ամեն մի քննադատութիւն այդ «կազմակերպութիւնների» բիւջէի վրա է ազդում, հետևաբար ամեն մի քննադատ պէտք է ֆիզիքապէս անկարող դարձնել դրանց արարքները երևան հանելու: Երկար տարիներ շարունակ «յեղափոխական» տակտիկան այդ է եղել. լռեցնել հայ ժողովրդի առողջամտութիւնը սթափեցնող ամեն մի քննադատական վերաբերմունք և շարունակ շահագործել դիւրահաւատ և տգէտ խուժանի անգիտակցութիւնը: Մասսայի տգիտութիւնից բացի այդ «յեղափոխականները» շահագործել են միամիտ ցնորական ազգասիրութիւնը, ազգասիրական զգացմունքը, տխմար ամբոխին հաւատացնելով թէ՝ բաւական է, որ նա բոլ փող տայ այդ «յեղափոխականներին» և նրանք գիտեն թէ ինչպէս փրկել հայութիւնը և «ազատ Հայաստան» ստեղծել: Տգիտութիւնը միացած շօվինիստական կրքի հետ նպաստաւոր պայմաններ էին ստեղծում մեր «յեղափոխական» գերիշխանութեան համար: Տգէտ հայ գիւղացու հոգում «Լուսաւորչի սուրբ հաւատին» կցեցին ֆիդայական շարժումներով Հայաստանը փրկելու սնահաւատութիւնը. այդպիսով վարդապետների հետ միասին առաջ եկան մեր կեանքի մէջ նոր գործօններ—խուժանապետներ: Վարդապետները և խուժանապետները դառան հայ ներքին կեանքի պաշտօնական և իրական ղեկավարները...

Ինչպէս որ չէ կարելի մեր պատմական հեռաւոր անցեալի մասին ճշգրիտ գաղափար կազմել վարդապետների պատմական գրուածքներից, այնպէս էլ սխալ կը լինէր մեր ներկայ կացութեան մասին ուղիղ հայեացք կազմել յենվելով մեր «յեղափոխական» խուժանապետների տրված տեղեկութիւնների վրա: Բոլորը տենդենցիօզ, միակողմանի, չափազանցրած, մոլորեցնող սրախօսութիւններ: Այդ մենք տեսնում ենք ամեն օր՝ կարդալով դրանց օրգաններում ամենապարզ եղելութիւնների խեղաթիւրված ձևակերպումները: Չը ստել, չը չափազանցնել, չը խեղաթիւրել չեն կարող այդ պարոնները, որովհետև նըրանց ամբողջ գործունէութեան հիմքը մարդիկ որսալն է: Լոյսը, քննադատութիւնը դրանց համար մահ է:

Այդպէս ուրեմն, դառնանք մեր խնդրին ղեկավարվելով օբյեկտիւ մեթօդով, փաստերով և ոչ «յեղափոխական» բլլետրիստիկայով և դեմագօգիական կառանչներով, թողնելով այդ «Արեան Ձայների» փառաբանած հերոսներին, յեղափոխական խիղախ իմաստակներին, որոնք անվերջ անալօգիաներով կարողացան այնքան տարի խաբել ժողովուրդը: Մակերե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՃԿԱՀԱՅԻ ԽԵՂԴՎԱԾ ՁԱՅՆԸ

Սոսկալի իրականութեան է դատապարտված «կլասիք» դարձած արեան աշխարհը: Ականջներիս հասնող կիսկատար տեղեկութիւնները, արիւնոտ նամակների անպաճոյճ բառերը և վախվխելով գրված մի քանի սրտաշարժ և հոգեբուղխ արտայայտութիւնները շատ բան են պարզում տաճկական իրականութեանը ծանօթ անհատների առաջ: Բաւական է կարդալ «երկրից» եկած նամակների «մենք քիչ կը գրենք, դուք շատ հասկացէք» հռչակաւոր արտայայտութիւնը, այլևս բաւական է տաճկական ռէժիմի դժոխային տեսապատկերները հոգուդ առաջ վերակենդանացնելու: Այդ անպաճոյճ բառերով այնքան բան է հասկացվում, որքան չէ կարող Թիւրքերի վանդալական ռէժիմը նկարագրող հատորը ժամերով ճառել:

Իրար ետևից գլորվում են երկար ու ձիգ տարիներ, բայց ապաբաղդ տաճկահայի քաօսային իրականութիւնը ու դժոխային պայմանները, եթէ չասեմ օրէցօր աւելի վատթարանում, գոնէ մազաչափ անգամ չեն փոխվում: Նոյնն է այսօր, ինչ որ էր մի քանի տարի առաջ: Նոյն ընտանեկան ու տնտեսական դրութիւնը, կեանքի, պատւի և գոյքի անապահովութիւնը: Նոյն քաղաքացիական ամենատարրական իրաւունքների բացակայութիւնը, վերջապէս նոյն լերդացած արիւնը, նոյն անիծված գեհենը, իրաւազուրկը, ստրուկը, ծեծվածը և այլն և այլն...:

Դեռ մինչև այսօր էլ կան միամիտներ, որոնք մէջքից կէս են լինում հաստատելու այն անհիմն կարծիքը, որ Թիւրքիայի դիւանագիտութեան ներքին աստառը և նրա սոսկալի գազանութիւնները տաճկահայի վերաբերմամբ այնքան էլ կործանիչ ու մտացածին չեն, ինչպէս ռուսաց դիպլօմատիական անարգ բարոյի բովից զտված, դուրս եկած նենգաւոր դիւանագիտութիւնը: Ոչ, պարոններ, որ Թիւրքական մեծ մարդասպանը այսօր եւրոպական ամենանենգ ու ճարպիկ դիւանագիտական խաղերի վրա աւելացրել է և արևելքի խորամանկութիւնը, գազանութիւնը ու բարբարոսական բնազդը—դա արդէն դառն իրականութիւն է և ոչ ոք չէ կարող ժխտել այդ:

Մինչդեռ ըստ երևոյթին մեզ թւում է, որ Թիւրքաց-Հայաստանում, Մակեդօնիայում կամ Արաբիայում «խաղաղութիւն է» տիրում, բայց ո՞վ չը գիտէ, որ այդ գերեզմանական խաղաղութիւնից դիակային հոտ է փչում, ո՞վ չը գիտէ, որ հայերի, մակեդօնացիների բերանները խնամքով պինդ կապել են և վա՜յն եկել է Մեծ Փադիշահի դիւային խաղաղութիւնը վրդովող անիծված գեաւուրներին:

Այո, Թիւրքաց-Հայաստանումը այսօր «սուսուփուս» շարունակվում է նախկին հայաջինջ քաղաքականութիւնը աւելի [illegible] ու կործանիչ ծրագիրներով, քան առաջ: Սուլթան Համիդը, յենված բռնապետների գոյութեան աւանդական խարիսխների—ագրար քաղաքականութեան, տարբեր ցեղերի վերաբերմամբ ունեցած աչառու և անարդար իրաւական ներքին օրէնքների, ինչպէս նաև կրօնի կմախքացած միստիկ դոգմաների վրա, այսօր փառաւոր կերպով մի սուր անտագոնիզմ է ստեղծել Թիւրքիայի նոյն սօցիալ-տնտեսական պայմաններում տապակվող, բայց տարբեր ցեղերի պատկանող ազգութիւնների մէջ:

Անխիղճ շառլատաններ. ինչ գեղեցիկ կերպով իւրացնում էք «բաժանիր ու տիրիր» ամբարտաւան սկզբունքը, ինչ գեղեցիկ կերպով շահագործում էք կուլտուրական ստորին ֆօնի վրա կանգնած մասսայի տգիտութիւնը և համբերութիւնը:

Այսօր անտանելի է դարձել բազմատանջ տաճկահայի գոյութիւնը: Նա և տնտեսապէս, և բարոյապէս, և ֆիզիքապէս այսօր շնչասպառ դարձած իր սև հոգսն է կարդում: Ի՞նչ անէ խեղճը: Նա ամեն կողմից փորձեց իր բաղդը: Ծովի զոռ ալիքներին կուլ գնացող դժբաղդ զոհի նման իր կեանքը փրկելու անյագ տենչով լցված՝ ինչ յոյսի նշոյլ էր որ նկատեց, ինստինկտաբար և յուսահատ շեշտերով իր յոգնած բազուկները ձգեց դէպի նա: Ապստամբական փորձեր արեց, գլխին տուեց և ամենավայրենի և տմարդի ճանապարհներով այնպիսի մի հարուած հասցրին, որ մինչև այսօր էլ չէ կարող ուշքի գալ: Լռում է, էլ աւելի նենգ և վտանգաւոր ճանապարհներով են սկսում սիստեմատիքաբար ծրագրված հայաջինջ քաղաքականութիւնը: Օգնութիւն և պաշտպանութիւն է աղերսում «քրիստոնեայ պետութիւններից», բայց տարաբաղդաբար սառը քար է դառել նիւթապաշտ պետութիւնների սիրտը, կամ ամենաշատը նրանց անպըտուղ օրօրները պլատօնական նեղ ու անձուկ շրջանակից դէպի իրականը չեն անցնում: Վերջնապէս հաւատափոխութեան փորձեր է անում, բայց լայն ու ազատ անկիւններում նստած իր համբերինակից «կուշտ եղբայրների» հոգևոր հայրերն և մինչև անգամ օտարների կողմից լուտանքների, ամօթանքների և անէծքների անարգ սիւնին է գամվում:

Հապա ինչ անէ...

Չէ՞ որ ամեն ցաւը, ամեն երևոյթն էլ իր որոշ չափն ու սահմանը ունի: Չէ՞ որ նա էլ մարդ է, նա էլ ապրելու և վայելելու սէր ու տենչանք է կրում իր կրծքումը:

Երկրից հասած նամակները մէկը միւսից տխուր են ու մահաշունչ, մէկը միւսից սրտաշարժ են ու յուսահատ: Բաւական չէ ամբողջ 10 տարվայ զինուորական տուրքի ապառիկ մնացած դրամները (պաքեյէ), ինչպէս նաև միւս տուրքերի «ամենախիստ» գանձումը, բաւական չեն ամենուրեք թևատարած թագաւորող սև սովը, տարափոխիկ հիւանդութիւնները, բաւական չէ բնակչութեան տնտեսական հիմնովին քայքայումը, բաւական չեն պետական լիրբ, ագահ ու կաշառակեր բարձր և ստորին պաշտօնեաների անվերջ կամայականութիւնները և բռնութիւնները, կարծէք թէ այդ քիչ է բոլորը և նրանց վրա նորանոր չարիքներ է բարդում տաճկական ողորմած փադիշահը:

Ահա թէ ինչ է գրում մարտի 10-ին Բիթլիսից ստացված մի նամակ. «Այս տարվայ մեր կրած տանջանքն ու նեղութիւնը կը գերազանցէ քան ամեն տարվանը: Ձեզ ծանօթ զանազան պարագաներից ստիպված, չեմ կարող ամեն ինչ պարզ գրել: Ես քիչ կը գրեմ, դուք շատ հասկացէք: Այլևս մեզ համար ապրելը՝ մահ է: Տասը տարուց աւել մնացած թագաւորական վէրկինը (հարկը) այս տարի շատ խիստ կը պահանջեն մեզանից: Ժողովուրդը հացի փարա չունի, վէրկինը ո՞րտեղից տայ: Ով չի տար իւր ժամանակին, զաբթիէները ու մուխթարը (հարկահանը) անոր տունը կը մտնեն և եղած չեղածը դուրս կը հանեն աճուրդի: Ուրիշ բաներ ալ չեմ գրեր, դուք կիմանաք: Ամենաաղքատ ընտանիքների վրա 8—10 լիրա պարտք կը մնայ: Այդ էլ թողունք: Չը գիտենք ինչու համար այս տարի մեր սուլթանը այնպէս իրադէ ըրած է, որ Ռուսիա գնալու կամք ունեցողները կարող են երթալ: Շատ շատերը Թաւզիրայի (անցագրի) կը սպասեն որ Ռուսիա անցնին: Այստեղ մարդ չի մնայ, ապրելու ճար չը կայ: Բայց կարելի է մեր գործերը ուրիշ տեսակ դառնան (վերջին բառերը երևի երիտասարդ Թիւրքիայի նորագոյն շարժումների մասին են ակնարկում): Սովը սարսափելի է այս տարի: Քաղաքը տարէց տարի յետ կերթայ, առուտուր չը կայ, խեր չը կայ: Ցորենն էլ չի ճարվի, շատ թանկ է. սովից մահացողների դէպքեր շատ են եղեր»:

Այդ էլ բաւական չէ, Թիւրքաց-Հայաստանի ամենախուլ և ամենահարստահարված նահանգական քաղաքներից մէկում—Բիթլիսում և իր շրջակայքում մարտի 15-ին մի սարսափելի երկրաշարժ է տեղի ունեցել: Կարծէք բաւական չէին մարդկային պատուհասները, այսօր այդ արիւնոտ անկիւնումը աւելանում է և բնութեան անողոք և կործանիչ պատուհասը: Բիթլիսից եկած ապրիլ 1 թուակիր մի ուրիշ նամակ հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում այդ երկրաշարժի մասին.

«Մարտի 15-ին սարսափելի երկրաշարժ մը եղաւ: Քաղաքին և իր շրջակայքներին շատ և շատ աւերմունքներ և վնասներ տուաւ: Շատ տներ և խանութներ բոլորովին քանդուեցան: Բոլորովին ողջ տուն չը մնաց, որը աւերակ դարձաւ և քար քարի վրա չը մնաց, որը ճեղքւեց, որի առաստաղը քանդուեց, պատերը փըլան, գերանները թափան: Շատ վնաս հասցըրեց քաղաքին այն հանգամանքը, որ զառիվայրերի և սարի գօտիների վրայի տները, տուն տան վրա էր շինուած, վերի տները բլելով աւերակ կը դարձնէր և ներքևի տները: Երկրաշարժի ժամանակ շատ մահացողներ ու վիրաւորներ եղան: Վերջապէս շատ մեծ աւերմունքներ արեց այս զուլում երկրաշարժը: Ամբողջ 15 օր է, որ ամեն օր գիշեր ու ցերեկ կը շարժուի երկիրը: Գիշերներն 4—5 անգամ կը շարժի, բայց ամենասաստիկ երկրաշարժը 3 անգամ է եղած: Հիմա թէ կը հարցնէք. այս 16 օր է, ինչ բաց հրապարակներն ենք դուրս եկած: Ձիւնը փորած ենք, վրան հին ջուլ ու փալաս թափած նստած ենք: Սաղ քաղաքը այս 15 օր է դուրս կը մնայ. ունեցողներից ոմանք չադր են զարկած ձիւների մէջ, ոմանք տախտակէ տուն, քօլ են շինած, իսկ աւելի աղքատները ձեան վրա կը մնան: 5—6 ընտանիք մէկ քօլի տակ կը տեղաւորուինք. նստելու տեղ անգամ չը կայ քօլի տակ, իրարու ոտքերի վրա կը նստենք: Մեր մեղքէն այս տարի շատ ձիւն եկաւ. հիմա ալ սկսած է անձրև գալ: Այդ ալ թողունք շատ տեսակ հիւանդութիւններ են դուրս եկած. չադր չը կայ, քօլ չը կայ, որ մի քանի հիւանդ չըլլայ: Հիւանդները մի քանի օր կը պառկին, իսկ շատերն ալ կը մեռնին:

«Հիմա թէև շատ տէրութիւններ ողորմութիւն կը ճամբեն կարօտեալներուն համար և տունները նորոգելու համար, բայց կարիքն ու ցաւերը այնքան շատ են, որ այդ ողորմութիւններով չի կարող մեր [illegible]: Քաղաքի բոլոր մալն ու կարողութիւնը, մինչև անգամ ուտելիքները հող ու քարի տակ են մնացել: Շատերն իրանց տակ եօրղան-դօշակները ալ չեն կարողացել ազատել: Դուքան բազար չը կայ: Համողը հաց կուզէ, բայց հաց ճարելը, քանի որ ոչ փարայ և ոչ էլ կարողութիւն է մնացած»:

Երկրից հասած խեղդված ձայնը սրտաճմլիկ է ու յուսահատ: Մէկ կողմից սովն ու տարափոխիկ հիւանդութիւնները, միւս կողմից երկրաշարժի սարսափելի վնասներն ու աւերմունքները և վերջապէս ոճրագործ պետութեան հարկերի խիստ գանձումը և հազար ու մի հարստահարութիւն, բռնութիւն ու զըրկանքները տաճկահային միանգամայն շշմեցրել ու շնչասպառ են դարձրել: Ի՞նչ անել. ռուսահայերի սովեալների ծովացած կարիքները հանդէպ մռայլ տանջանքների «կլասիք» [illegible] դարձած տաճկահային: Կարող ենք կամ իրաւունք ունենք ներկայ պայմաններում նախապատւութեան վերաբերմամբ տաճկահայի և ռուսահայի մէջ խտրութիւն դնել:

Տաճկահայը յոյսը ամեն տեղից կտրած, շլինքը ծուռ և արտասուաթոր աչքերով իր ուշք ու միտքը իր միակ յոյս-ապաւէն ռուսահայ մեծ եղբօրն է յառած:

Շատ յաճախ է ռուսահայը իր տաճկահայ եղբօր օգնութեան հասել, նրա դառն արտասուքը սրբել և սև օրերը քաղցրացրել:

Տաճկահայի ներկայ կրիզիսը իր բարդ ու ծանր պայմաններով եղակի լինելով, այս անգամվայ անմիջական օգնութիւնը նրա գոյութեան և լինել չը լինելու հարցն է ասպարէզի վրա դնում... Չէ՞ որ մարդասպան փադիշահի ծրագիրն է այդ: Այս անգամն էլ պէտք է հնարաւորութեան չափ ուշքի բերել տաճկահային. այս անգամ էլ անհրաժեշտ է Եըլդըզի ոճրագործի մուրազը իր սրտումը թողնել...

Ար. Գիւրջեան

ւոյթային համեմատութիւններով կամ անալօգիաներով կարելի է միայն մթնացնել հարցերը, շփոթեցնել տհաս գլուխները:

Անկախ

(Կը շարունակվի)

ՌԷԹԷՈՍ ԷՖ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Կենսագրական)

«Մշակ»-ի անցեալ համարի վերջին տեղեկութիւնների բաժնում մենք հաղորդել էինք Թիւրքահայ յայտնի գրական, մանկավարժական-հասարակական գործիչ Ռեթէոս էֆ. Պերպերեանի մահվան մասին, որ տեղի է ունեցել ապրիլի 8-ին Կ. Պօլսում.

Հանգուցեալը ծնվել է 1848 թւին Խաս գիւղում, համեստ ընտանիքում: Իր կրթութիւնը ստացել է տեղական Ներսիսեան վարժարանում, Ներսէս Վարժապետեանի և Մաղաքիա Գարագաշեանի ղեկավարութեամբ: Իր ընդունակութիւնների շնորհիւ նա դեռ 18 տարեկան հասակում նշանակվեց Ներսիսեան վարժարանում ուսուցչի օգնական, իսկ կարճատև ժամանակից յետոյ նա ուսուցիչ հրաւիրվեց Ազգիանապօլսի զանազան դպրոցներում: 1869 թւին հրաւիրվել է ուսուցիչ Գագը գիւղում, որտեղ նրա ջանքերով հիմնվել է Արամեան վարժարանը. ուսուցչութեան պաշտօն է վարել միևնոյն ժամանակ Փանոսեան և Ագապեան վարժարանում, պաշտօնավարել է և ուրիշ դպրոցներում:

1876 թւին տարաձայնութիւն ունենալով հոգաբարձուների հետ՝ հրաժարվում է ուսուցչութիւնից և հիմնում է իր սեփական վարժարանը:

Սրանից 6 տարի առաջ տօնեցին նրա մանկավարժական 25 ամեայ գործունէութիւնը, որ տուել է մի քանի կրթված սերունդներ:

Վերջին ժամանակներս նա, թէև նիւթական աննախանձելի պայմաններում, բայց և այնպէս շարունակում էր պահպանել դպրոցի գոյութիւնը և այդ աննպաստ պայմանների դէմ էլ մաքառելով մեռաւ նա 58 տարեկան հասակում:

Հանգուցեալը աչքի ընկնող ժամանակութիւն է ունեցել գրական գործունէութեան մէջ, տուել է մի շարք գիտական, փիլիսոփայական և մանկավարժական աշխատութիւններ. «Առաջին տերևք», «Մարդիկ և իրք», «Թշուառութիւն և գութ, գեղեցիկն ու գեղարուեստը», «Բառ. անմեռնութիւն», «Դաստիարակի մը խօսքերը» և այլն: Այդ բանին մանաւանդ նպաստել է այն հանգամանքը, որ լաւ ծանօթ է եղել անգլիերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներին, որոնցից տուել է և մի քանի բանաստեղծական թարգմանութիւններ:

Հասարակական ասպարէզում ևս եռանդուն գործունէութիւն է ունեցել: Մաղաք Կաթողիկոսի ընտրութեան առիթով մղված պայքարի մէջ նա առանձնապէս աչքի էր ընկնում. եղել է անդամ քաղաք. ժողովի, գործել է զանազան մասնաժողովներում, յանձնաժողովներում, վարել է ուսումն. խորհրդի ատենապետի պաշտօնը և պատրաստել է կրթական ծրագիրը, կազմական կանոնագիրը, որը մինչև այժմ էլ գործադրվում է: Վերջերումս նա վարում էր ուսուցչ. օգնութեան սնդուկի խնամակալութեան ատենապետի պաշտօնը:

Կ. Պօլսի մամուլի ասելով Պերպերեանի մահը զգալի կորուստ է համարվում հայ ուսուցչութեան և հայ գրականութեան համար:

Ապրիլի 9-ին տեղի է ունեցել նրա թաղումը մեծ հանդիսաւորութեամբ: Ահագին երկսեռ բազմութիւն և ներկայացուցիչներ զանազան հաստատութիւնների կողմից ներկայ են եղել թաղմանը: Դագաղի վրա դրված են եղել բազմաթիւ ծաղկեայ պսակներ, ի միջի այլոց և աշակերտների ու աշակերտուհիների կողմից:

Սկիւտարի տաճարում եկեղեցական արարողութիւնից յետոյ դամբանական ճառ է արտասանել Օրմանեան պատրիարքը՝ գրուատելով հանգուցեալի բեղմնաւոր ու անձնանուէր գործունէութիւնը: Եղել են և ուրիշ խօսողներ:

Ներկայ եղողների թւում եղել է ի միջի այլոց և բողոքականների ազգապետը: Տեղական թուրք և ֆրանսիական մամուլը նոյնպէս գրուատական տողեր են նուիրել Պերպերեանի մահվան առիթով:

ՄԵՂՐԵՑՈՒ ՑԱՒԵՐԻՑ

Մեղրի գիւղ, մարտի 22-ին

Ժողովուրդը աղքատ է, բառիս ամենալայն մտքով. Նա աղքատ է ոչ միայն փողով, հողով, այլև, որ աւելի ցաւալին է, աղքատ է գիւղում եղող մշտական ինտելիգենտ գործիչ ոյժերով: Ներկայ անտեսական ճգնաժամը հասարակութեանը յուսահատ դրութեան է հասցրել, այնպէս որ նրա ցաւերի մասին խօսողին նրանք լսում են անտարբերութեամբ, քնաթաթախ մարդու նման:

Դպրոց ունենք՝ կարօտ վերաշինութեան. սենեակները պիտի ընդարձակել, պատուհանները բարձրացնել, մեծացնել, մի նոր դահլիճ շինել՝ բժական յարմարութիւններով, բակը մեծացնել, գրադարանը հարստացնել, որովհետև ուսումնարանը փակելուց յետոյ նրա ընտիր գրքերը չքացել են, չքացել է և ուսումնարանին նուիրաբերված կարի մեքենան: Հասարակութիւնը աղքատ է, մինչդ չունի որ այդ պակասը լրացնի, իսկ մեզանում էլ բարերարներ երևան չեկան: Ուսումնարանը աչքի ընկնող, մշտական եկամուտ աղբիւր չունի, մինչդեռ կար մի ժամանակ և այժմ էլ կարելի էր ունենալ: Մեղրին ունի ս. Յովհաննէս անունով մի վանք, որի տրամադրութեան տակ է դրված եղել մի փոքրիկ կալուածք—երեք չորս օրավար հող: Այդ կալուածքը անհրաժեշտօրէն պէտք է յատկացնել Մեղրիի ուսումնարանին, որովհետև նրա տուած աննշան արդիւնքը հազիւ թէ հասնում է Տաթևի կառավարութեանը: Մեզանից շատերն են փորձել իմանալու, թէ որքան արդիւնք է տեղ հասնում, որպէսզի իրանք աւելին տալով կարողանան այդ կալուածքը կապալով վերցնել, սակայն, իբրև գուրկօլեւկվալեան գաղտնիք, ոչ ոքին չի աջողվել իմանալու: Մելիք-Թանգեան Ն. վարդապետի յաջորդութեան օրով, այդ կալուածքը կարգի բերելու քօղի տակ, 1902 թւականին տասն տարի ժամանակով կապալով տրվեց գործակալ Վ. քահանայի փեսային, որպէսզի վերջինս այդ հողերը խաղողի այգիների վերածի, մինչև վեց տարի եղած արդիւնքը միայ իր օգտին, իսկ մնացեալ վերջին չորս տարվայ արդիւնքը կիսի վանքի հետ: Մի տարուց յետոյ՝ գործակալի փեսան այդ կալուածքը յանձնեց իր փեսային և փեսան՝ փեսային... Իսկ այսօր, վեց տարի շահագործվելուց յետոյ, համարեա էլի նոյն աւերակ դրութեան մէջ է, միայն, սուտ չը խօսելու համար, պիտի ասենք, որ մրգատու ծառերը բաւական նոսրացել են՝ վառելանիւթ դառնալով... Բացի այդ, Տաթևի վանքը Մեղրիում ունի Վազմ անունով մի կտոր հող. նա էլ գործակալի եղբայր Խ. քահանայի սեփականութիւնն է դառել... Ասում են, որ Մելիք-Թանգեան հայր-սուրբը, տանուտէր-տանի, ընտանիքը, այդ հողը վաճառել է յօգուտ Տաթևու վանքի, առանց աճուրդ յայտարարելու Մեղրիի հասարակութեան: Այս վաճառքի մասին չար լեզուները շատ բաներ են ասում... Ուստի ցանկալի էր, որ Մելիք-Թանգեան հայր-սուրբը բարեհաճէր պարզելու եղելութիւնը: Այդ հողերը նուիրաբերել են վանքին մեր պապերը՝ յօգուտ հանուրի. իսկ այսօր վայելում են ոմանք...

Այդ կալուածքները պէտք է ծառայեն մշտական աղբիւր: Այդպիսով տարիներ շարունակ հարիւրաւոր աղքատ մանուկներ կը կրթվեն նրա եկամուտներով:

Մեղրեցին, լաւ հասկանալով ուսման նշանակութիւնը, Թուրք-հայկական անմիտ կոտորածի պատճառով առաջացած անտեսական ամենաանել րոպէին անգամ, մեծ րիսկով, 1905-6 ուսումնական տարվանից, բացեց իր դպրոցը, սակայն, այդ տարին շատ քիչ արդիւնք տուեց, և դրա պատճառը մասամբ ուսումը ուշ սկսելն էր, մասամբ հոգաբարձակցութեան ընդհատվելը, որի շնորհիւ դասագրքերը և դասական պիտոյքները ժամանակին կարելի չեղաւ ստանալ: Անցեալ ուսումնական տարվայ վերջին, ուսումնական մասը բարելաւելու նպատակով, հոգաբարձութիւնը ուսուցչական կազմը փոխեց, բայց ունքը շինելու փոխարէն աչքը հանեց: Եւ ահա թէ ինչպէս. Նախկին աւագ-ուսուցիչ Ն. Տ.-ին փոխարինեց՝ Գէորգեան ճեմարանը բժիշկների խորհրդով կիսատ թողած և երկու տարի խուլ ընկած գիւղերում ուսուցչութիւն արած Ս. Տէր-Գ.-ցօվը. ուսուցիչներ հրաւիրեցին Երևանի թեմականը նոր աւարտած Բ. Տ.-ին և տիկ. N.-ին, իսկ ռուսաց լեզու աւանդելու համար Թիֆլիսի գիմնազիայի նստարանից նոր վերկացած մի օրիորդ՝ հին կազմից, թողնելով ֆունդամենտալնի կրօնուսոյց քահանային: N.-ին շուտով արձակեցին նրա անպատրաստականութեան պատճառով և ապա ստիպված եղան հրաւիրել նախկին ուսուցիչ Ա. Ա.-ին: Բայց չանցած երեք ամիս, աւագ-ուսուցիչը ակարանում է և նրա պատճառով էլ ուսման գործը սկսում է կաղել. ուրեմն այս տարի էլ մեղրեցիք տուժեցին:

Առաջին տարվայ համար, պատճառը պարզ լինելով, մարդ լռում է, իսկ ներկայ տարվայ համար լռելը, երբ խօսքի և մամուլի ազատութիւն է, չը նայած որ գաւառական թղթակիցները ենթակայ են հալածանքի, կը լինէր մի մեծ յանցանք: Այստեղ բնականաբար հարց է ծագում, ում մեղադրել: Նախ աւագ-ուսուցչին, որի տկարութիւնը մեղ էլ ցաւ է պատճառում, որ նա, իր կասկածելի ֆիզիքականով, յանձն է առնում մի այդպիսի պատասխանատու պաշտօն, որով մեղք է գործում թէ իր անձի դէմ և թէ վնասում է ուսման սուրբ գործը: Եւ երկրորդ՝ հոգաբարձութեան, որովհետև եթէ նա ուսուցչական կազմը փոխում էր բարելաւելու նպատակով, պէտք է հրաւիրէր աւելի հմուտներին: Եւ հէնց այդ էր պատճառը, որ աւագ-ուսուցիչը, որը ռուսաց լեզուի դասաւանդութեան մէջ շատ փորձված էր, իրան վիրաւորված զգալով, որ աւագ ուսուցչութիւնը առնելով յանձնում են մի բոլորովին անպատրաստ, անփորձ մարդու, հրաժարվեց ընդունել հոգաբարձութեան առաջարկը և միալ ռուսաց լեզուի ուսուցիչ: Որքան էլ իրաւացի էր նրա վիրաւորանքը, բայց ներելի չէ, որ նա անձնական դիտումներից, պատուասիրութիւնից դրդված վնասեց ընդհանուր գործը, սակայն հանելուկ է և հոգաբարձութեան այդ անխոհեմ քայլը, որովհետև նա ճանաչված է հասարակութեան կողմից իբրև բարեխիղճ հոգաբարձութիւն: Եւ, ուզենաս չուզենաս, մտածում ես, որ այս բանում անձնական հաշիւներով ղեկավարվող թելադրող մի ոյժ կայ, որին հոգաբարձութիւնը իր միամտութեամբ զոհ եղած պիտի լինի. այլապէս դժուար է ուրիշ եզրակացութեան գալ: Հարկաւոր է զգոյշ լինել և ուսուցիչ հրաւիրելիս նրա մտաւորականի հետ միասին աչքի առաջ ունենալ և նրա ֆիզիքական կարողութիւնը, այլապէս միշտ կը տուժենք:

Ցաւող

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Թաւրիզ, ապրիլի 26-ին

Գիշերս՝ ամսիս 25-ին «Արամեան» դպրոցի օգտին առաջին անգամ Թաւրիզում խաղացվեց Գօգօլի յայտնի «Վերաքննիչ» պիեսան: «Վերաքննիչը» ռուսական պիեսա է և անմահ Գօգօլի ամեն մի՝ թէկուզ աննշան տիպերը ներկայացնելու համար, մեր կարծիքով, ամենից առաջ ռուս պիտի լինել՝ այն էլ Ռուսաստանում ծնված ու սնված, այլապէս շատ հազուագիւտ հանգամանքներում կարելի կը լինի անմահ հեղինակի տիպերը ցանկալի հարազատութեամբ դուրս բերել: Այդ տեսակէտով եթէ դատելու լինենք՝ պարզ է, որ սիրողների կողմից «Վերաքննիչ» դնելը համարձակ քայլ պիտի համարվէր, բայց եթէ այդպիսի համարձակութիւններ չը լինեն, մենք յաւիտեան պիտի զրկված մնանք «Գօգօլի» իմաստալից պիեսան տեսնելուց և մի ամբողջ ժամանակաշրջանի ծանօթութիւնից: Այսուհանդերձ՝ արդարութիւնը ստիպում է մեզ խոստովանել, որ մեր սիրողները երկար պատրաստութեամբ ամեն ճիգ ու ջանք գործ էին դրել՝ որքան հնարաւոր է, տանելի դարձնել ներկայացումը. և պատիւ իրանց, կարողացան շատ բաւարար կերպով տանել ներկայացումը, մինչև վերջ գոհացնելով հետաքրքիր հասարակութեան և անմահ Գօգօլի ոգուն, որը կարծես այդ երեկոյ սաւառնում էր մեր բեմի վրա, իմանալու արդեօք Պարսկաստանի սահմաններում իր տիպերը չեն աղաւաղել, խեղաթիւրել: Սխալ չեմ, եթէ ասեմ, որ մինչև օրս մեր բեմերի վրա եղած ներկայացումներից ամենաաջողվածը կարելի է համարել «Վերաքննիչը», որի անսամբլը բաղկացած էր մեր ամենալաւ սիրողներից: Մեր կարծիքով այս պիեսան պիտի ամեն տարի կրկնել մեզնում, նամանաւանդ որ իմաստը շատ մօտ է մեր երկրի իրականութեան (աւելի ճիշտ կը լինի ասել, որ մեր երկրի իրականութեան ամենաթոյլ և ամենաաղօտ անդրադարձումն է):

Մոռացայ ասել, որ այս շաբաթվայ ընթացքում սա երկրորդ ներկայացումն էր. առաջինը՝ անցեալ գիշեր խաղացվեց «Բաղդասար աղբար»-ը, իսկ երրորդը առաջիկայ գիշեր Իբսէնի «Նորան». այս երկուսը, եթէ չեմ սխալվում, «Բարեգործական Նպատակների» օգտին է... հասկանալի է էլի... Շատ չի անցնի, որ ստիպված կը լինենք հետզհետէ յօգուտ Թաւրիզի հայ հասարակութեան ներկայացումներ տալ... «Ագար եյ բեյա ասար, սօվուղ բըղի թեզ քասար» (եթէ քամին այսպէս փչէ, ցուրտը մեզ շուտ կը կտրէ), ասում է պարսկական առածը...

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 մայիսի: Նիստը բացվում է ժամը 2 և 11 րօպէին: Նախագահում է Գօլօվինը:

Կառավարական օրինագծերը կարդացվելուց յետոյ, Դուման լսում է խմբագրական մասնաժողովի զեկուցանող Վլադիմիր Հէսսէնին, որը զեկուցանում է Պետական Դումայի դիւանատան ծառայողների նախագծի վերջնական խմբագրութիւնը, որը ընդունվում է միաձայն:

Հերթին դրված է Դումայի 168 անդամների յայտարարութիւնը՝ մասնաժողով ընտրելու ընդհանուր ուսման օրինագիծը քննելու և ժողովրդական լուսաւորութեան բոլոր օրինագծերը նրան յանձնելու համար:

Մինիստրների օթեակում տեղ է գրաւում ժողովրդական լուսաւորութեան մինիստրը:

Վլադիմիր Հէսսէնը պաշտպանում է յայտարարութիւնը, մասնանշելով ի միջի այլոց, որ ընդհանուր ուսումը միայն կարող է նպաստել նոր պետական կազմի հաստատման, որի համար աշխատում է Պետական Դուման:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը սկսում է՝ շնորհակալութիւն յայտնելով Դումայի այն անդամներին, որոնք առաջ մղեցին ընդհանուր ուսման կառավարական օրինագծը շուտափոյթ քննելու հարցը, որ նպատակ ունի մերձեցնել ազգաբնակութիւնը հանրամատչելի դպրոցին, որովհետև սա հանդիսանում է ժողովրդական բարեկեցութեան անկիւնաքարը և Դումայի ձեռքով մշակվող շատ և շատ օրինագծերը շուտափոյթ անցնելու գրաւականը. առանց ընդհանուր ուսման տնտեսական կուի մէջ հարևան ազգութիւնների հետ, որոնք աշխատում են աւելի խոր մանել ռուսական բնութեան հարստութիւնների շահագործման մէջ, մեր բարի և ընդունակ ժողովուրդը անզօր է ինքնին. առաւելապէս դա ամօթալի է ռուս «արմատական» բուն ազգաբնակութեան համար, որի լուսաւորութիւնը, կրթութիւնը, դատելով մինիստրի ներկայացրած գրական փաստաթղթերով, ամենից քիչ զարգացած է, համեմատաբար նոյնիսկ Ռուսաստանի ոչ բնիկ ազգաբնակութեան կրթութեան զարգացման հետ: Հանրամատչելի դպրոց մտցնելը այլևս չէ կարելի ուշացնել, ժամանակ է ժողովուրդը հանել տգիտութիւնից, նրան հնարաւորութիւն տալ տեսնել, նայել իր շուրջը:

Ունենալով այն սկզբունքը, որ ժողովրդական կրթութիւնը մենաշնորհ չէ բնաւ, այլ պահանջ անշուշտ, մինիստրութիւնը օրինագծի հիմքում դրել է այն սկզբունքները, որ դրված էին 1860 թ. ժողովրդական դպրոցների խմբագրական մասնաժողովի կարծիքների հիմքում: Ռուսաստանի լաւագոյն մարդկանց մտքերը, որոնք յարուցվել են անկաշկանդ գիւղացիներին քաղաքացիական կեանքի ենթարկելու համար, բնականաբար ծնունդ առան և առաջին անգամ՝ մեր գիւղացիութեան քաղաքական կեանքին ենթարկելու ժամանակ: Մտադրված բարենորոգման իրականացման համար ամենադժուար արգելառիթ հանդիսանում է այն հանգամանքը, որ անհրաժեշտ է վերին աստիճանի ընդարձակ չափով աւելացնել ներկայումս դպրոցական գործի համար ծախսվող դրամները, որովհետև սրանից մէկ տարի առաջ 12 միլիոն դպրոցական երեխաներից դպրոցներում ուսանում էին միայն 5 միլիոնը և տեղ չը կար 7,300,000 երեխաների համար. ամեն տեսակի դպրոցներ կային միայն 90,000: Անհրաժեշտ է բանալ 160,000 նոր ուսումնարաններ, որպէսզի կարելի լինի ձեռքի տակ ունենալ այն թւանշանները, որոնք կապահովեն ընդհանուր ուսում մտցնելու գործը. բացի դրանից, հարկ կը լինի սկսել ժողովրդական ուսուցիչների յատկութիւնը և դրութիւնը բարելաւելուց, որովհետև միայն լաւ ուսուցիչն է լաւ դպրոց տալիս: Կարևոր է, որպէսզի ուսուցիչը ոչ միայն ուսուցանէր, այլ և կրթէր: Պղատոնը ասում է, որ մարդը բնութիւնից հեզ է, միայն վատ և պակասաւոր կրթութիւնն է, որ նրան գազանակերպ է դարձնում: Մեղք է փող խնայել այդ բարենորոգման իրականացման համար, որը նպատակ ունի ազատել մեզ այդօրինակ գազանակերպ երեխաներից և մեզ տալ պատուաւոր քաղաքացիներ: Բարենորոգումն մտցնելը կարևոր է մեր օրերում. երբ մայիսի 5-ի ակտից յետոյ բոլոր դասերը հաւասարվեցին իրանց իրաւունքներով, երբ ոչ ոք տարրական դպրոցում իր ուսումը սկսողներից չէ կարող զրկվել պետական կառավարութեանը մասնակցելու հնարաւորութեան յոյսից, այժմ, երբ տարրական դպրոցներն աւարտող երեխաները, նստած այդ նստարանների վրա մասնակցում են օրէնսդրութեան մէջ: Մինիստրութիւնը կանգ չի առնի ահագին ծախսերի առաջ, որ պահանջում է բարենորոգումը, համարելով այդ ծախսերը կապիտալի ամենաշահաւէտ շինութիւն:

Մատնանշելով, որ լրացուցիչ օրինագծերի շարքում մինիստրութիւնը պատրաստել է ամեն անհրաժեշտ բանը, կենտրոնում ընդհանուր ուսում մտցնելու համար, մինիստրը միանում է Դումայի 168 անդամներին և խնդրում է օրինագիծը շուտով յանձնել մասնաժողովի, որովհետև աշնանը դպրոցական ցանց բանալու համար ժամանակ է հարկաւոր: Նոյն կերպ, մինիստրը միացնում է իր միջնորդութիւնը 168 անդամների յայտարարութեան այն մասին, որը խօսում է երկրորդական նշանակութիւն ունեցող օրինագծերը մասնաժողովին յանձնելու մասին, որովհետև Ռուսաստանի այն անկիւնների համար, որտեղից իրանց սկիզբն առան այդ օրինագծերը, նրանք կեանքի հարցերի նշանակութիւն ունեն:

Վերջում մինիստրը ասում է, որ բարենորոգման իրականացումը կարելի է սոսկ մէկ պայմանով, որ ամբողջ հասարակութիւնը և ամբողջ ժողովուրդը եռանդագին և հաստատ յայտնեն, որ դպրոցը գոյութիւն ունի միայն դպրոցի համար: Կառավարութիւնը մենակ անկարող է կռւել դպրոցը քաղաքական խըռովութիւնների ասպարէզ դարձնելու դէմ: Հարկաւոր է համայն ժողովրդի հեղինակաւոր խօսքը, հանուր հասարակութեան, հարկաւոր է ասել մեր երեխաներին. «Ուսանեցէք, որպէսզի մեր ընդհանուր հայրենիքի պատուաւոր քաղաքացիներ դառնաք. Նրա վիճակը դուք կը լուծէք, եթէ հասունանաք»: (Կենտրոնը և աջակողմեանները ծափահարում են):

Արխանգէլսկին ընդհանուր ուսման հարցը նոյնչափ ցանկալի է համարում, ինչպէս ագրարային հարցը. պնդում է, որ Դուման, նախ քան մասնաժողովին յանձնելը, նախնական կերպով դիրեկտիվներ, ուղղութիւններ որոշէ մասնաժողովի գործունէութեան համար:

Գոմբեսկին յիշեցնում է, որ ֆրանսիացիներին յաղթեց գերմանացի ժողովրդական ուսուցիչը: Օրինակ բերելով Ռուսաստանում ապրող հրեաներին, որոնք համարեա ամբողջովին գրագէտներ են, խորհուրդ է տալիս կանգ չառնել ժողովրդական կրթութեան ծախքերի առաջ: «Դպրոցը դպրոցի համար» սկզբունքը անհրաժեշտութիւն ընդունելով ասում է, որ ժողովրդական լուսաւորութեան դպրոցների ցաւալի դրութիւնը հետևանք է կառավարութեան ճնշումների և միանում է օրինագիծը մասնաժողովի յանձնելու առաջարկութեան:

Մերժվում է վիճաբանութիւնները դադարեցնելու առաջարկը:

Ընդունվում է հռետորների ցուցակագրութիւնը դադարեցնելու առաջարկը:

Խօսելու են 65 հռետորներ:

Կրուպենսկին, յիշատակելով մինիստրի ճառի կենդանի առաջադիմական տոնը, կարծում է, որ մնալով հետևողական, մինիստրը պէտք է թողնէր միայն իր օրինագծի առաջին յօդուածը և ջնջէր նրա ամբողջ մնացած մասը: Մանրամասնաբար պարզելով լեհական թագաւորութեան դպրոցների դրութիւնը, ուր ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը յաճախ իր վրա է վերցնում ներքին գործերի մինիստրութեան ֆունկցիաները, հռետորը միանում է օրինագիծը մասնաժողովի յանձնելու առաջարկութեան:

Մերժվում է հռետորների խօսելը 10 րօպէով սահմանափակելու առաջարկը:

Միլեկը եռանդով պաշտպանում է ընդհանուր ուսման գաղափարը, նկարագրում է այն պատկերը, որով գիւղացին սպասում է, որ գիւղերում տարրական դպրոցներ բացվեն, գիւղի համար միակ գիտութեան այդ տաճարները. կարծում է, որ այդ օրինագծի վրա աշխատողների անունները ժողովուրդը ոսկէ տառերով կարձանագրէ բազմաչարչար Ռուսաստանի պատմութեան էջերում:

Մախմուդովը միանալով սահմանադիր-դեմոկրատների առաջարկութեան, որովհետև Դումայի ընդհանուր ժողովում ընդհանուր ուսման հարցը չէ կարելի լուծել, նկարագրում է մահմեդական դպրոցների և ուսուցիչների ծանր դրութիւնը. կարծում է, որ ժողովրդական ուսուցիչներին կազատէ ոչ թէ ռոճիկների աւելացումը, այլ մտածողութեան ազատութիւնը:

Տիզգանեան մի ընդարձակ ճառով խիստ քննադատութեան է ենթարկում ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան գործունէութիւնը. դպրոցի փրկութիւնը գտնում է նրան ժողովրդականացման (դեմօկրատիզացիա), ապակենտրոնացման և ազգայնացման (նացիօնալիզացիա) մէջ:

Ծափահարութիւնների տարափի տակ ընդունվում է հռետորների ճառերը 10 րօպէով սահմանափակելու առաջարկութիւնը:

Վօզնեսենսկին անձնական փորձի վրա հիմնվելով, ինչպէս ժողովրդական ուսուցիչ, վըկայում է ուսուցիչների անտանելի կացութիւնը, որոնք յաճախ ոչ թէ լուսաւորութիւն են քարոզում, այլ այլասեռում են իրանց յանձնված երեխաներին:

Պուրիշկևիչը տեղից նկատում է, որ Վօզնեսենսկու լեզուն կաղաղ է:

Հետևեալ հռետորի—Հասանովի ճառի ժամանակ աջակողմեանների միջից շարունակվում են լսվել զանազան նկատողութիւններ: Հասանովի «երբ միապետութիւնը դեռ ամուր էր» խօսքից յետոյ, Կելէպօվսկին, իսկ նրա ետևից Սազօնովիչը սկսում են աղաղակել՝ «միապետութիւնը այժմ էլ ուժեղ է»: Կելէպօվսկին բռունցքներով զարկում է նստարանին: Ետևից աջակողմեան պատգամաւորների միջև լսվում են աղաղակներ՝ «կորիր, թող կորչի...» Ընդհանուր աղմուկ և ուժեղ շարժում: Աղաղակները և գոչերը աճում են:

Պուրիշկևիչը կանգնած մուտքի մօտ, մասնակցում է ընդհանուր աղաղակներին:

Հասանովը ամբիօնից նկատում է հաշտաբար տոնով. «Ձեր կարծիքով Ռուսաստանում միապետութիւն է, իսկ մեր կարծիքով—սահմանադրական կազմ»:

Աղմուկը և աղաղակները աճում են աւելի մեծ ոյժով: Նախագահը մի գլուխ զանգահարում է:

Հռետորը շարունակում է. «Լաւ, ես կիջնեմ այս ամբիօնից, բայց ոչ այն պատճառով, որ նրանք»...

Նախագահը, աշխատելով լռեցնել դեռ շարունակվող աղմուկը, ասում է. «Ձեզ հարկաւորութիւն չը կայ իջնել այդ ամբիօնից, այժմ դուք կը վերջացնէք ձեր ճառը: Առաջարկում եմ Դումային այսօրվայ նիստից դուրս տանել Պուրիշկևիչին, Կելէպօվսկուն և Սազօնովիչին, նրանց անտեղի վարմունքի պատճառով»:

Պուրիշկևիչը տեղից. «Նախ և առաջ նկատողութիւն արէք»...

Կրկին աղմուկ, աղաղակներ, շփոթ... «Ով համաձայն է, թող նստած մնայ, իսկ ով որ ոչ—խնդրեմ կանգնէ»...

Կանգնում են մի քանի աջակողմեաններ: Առաջարկութիւնը ընդունվում է:

Բարեկամական և բուռն, ձախից և խանդավառ ծափահարութիւնների յոխորտալից պայթում:

Նախագահը խնդրում է Պուրիշկևիչին, Կելէպօվսկուն և Սազօնովիչին հեռանալ նիստի դահլիճից:

Երեքն էլ ցոյցով չեն շարժվում իրանց տեղերից:

Նախագահը ասում է. «Յայտարարում եմ միջարար, որից յետոյ պատգամաւորներ Պուրիշկևիչը, Կելէպօվսկին և Սազօնովիչը նիստի դահլիճը չեն կարող մնալ»:

Միջարարի ժամանակ յուզված պատգամաւորների վրդովեցուցիչ խօսակցութիւնները ծածկում են մասնակի ձայները: Հեռացված պատգամաւորները կենդանի վիճում են նրանց յորդորող համախոհների հետ, ասելով. «Մենք չենք գնայ, թող մեզ ոյժով հեռացնեն»:

Հինգ րօպէից յետոյ նիստը վերսկսվում է: Պուրիշկևիչը, Կելէպօվսկին և Սազօնովիչը իրանց տեղերումն են: Նախագահը յայտնում է. «Ի նկատի ունենալով, որ Դումայի անդամներ Պուրիշկևիչը, Կելէպօվսկին և Սազօնովիչը չեն հնազանդվում Դումայի որոշման և չեն հեռանում նիստի դահլիճից, առաջարկում եմ Դումային հեռացնել նրանց 15 նիստերի ժամանակ»:

Նորից ուժգին և երկարատև ծափահարութիւնների բռնկում:

Կելէպօվսկին աշխատելով իր ձայնով ծածկել ծափահարող դահլիճի դղրդոցը. «Խօսք եմ խնդրում»:

Նախագահը. «Խնդրեմ. սակայն նախազգուշացնում եմ, որ կարող էք խօսել միմիայն ձեր վարմունքները արդարացնելու մասին»:

Կելէպօվսկին. «Իմ այն խօսքերը, թէ Միապետ Ցարին և ուղղափառ եկեղեցին պաշտպանելը միշտ և ամենուրեք տեղին են, պատճառ դարձան ինձ հեռացնելու»:

Նախագահը ընդհատում է հռետորին. «Հեռացնելը որոշված է ոչ թէ այդ խօսքերի համար, այլ այն պատճառով, որ տեղից բացականչած խօսքերով դուք խանգարեցիք Դումայի պարապմունքները: Դուք հեռանում էք ոչ թէ խօսքերի, այլ վարմունքի պատճառով: Ըստ էութեան, աւելորդ էր ձեր պաշտպանութիւնը միապետութեան վերաբերութեամբ, որովհետև ոչ հռետորը, ոչ էլ առհասարակ ոչ մէկը չը յարձակվեց ոչ ուղղափառ եկեղեցու, ոչ էլ Միապետ Ցարի վրա»:

Սազօնովիչը ասում է, որ գալով Դումա, նա յոյս ունէր, որ Դուման իր դէվիզը կընտրէ «ազատութիւնը արժանի է նրան, ով յարգում է ուրիշների ազատութիւնը», մինչդեռ գործնականապէս Դումայում հանդիպեց սոսկ բռնութեան:

Նախագահը. «Զրկում եմ ձեզ խօսքից»: (Կըրկին ծափահարութիւնների պայթում):

Պուրիշկևիչը. «Աւելորդ եմ համարում արդարացնել ինձ»:

Կենտրոնից լսվում է մի ձայն. «Այդ դէպքում լաւ է ոչինչ չը խօսել. բաւական է...»

Պուրիշկևիչը ամբիօնից. «Ես ձեզ չեմ հարցնում: Այս միջնադէպին կամ ցաւալի դէպքին—ինչպէս կուզէք անուանեցէք, ես մեծ մասնակցութիւն չունեցայ: Հեռանում եմ մեծ բաւականութեամբ»: (Իջնում է ամբիօնից և գնալիս մրթմրթում է. «ընտրեցէք աւելի լաւ նախագահ»):

Նախագահը. «Քուէարկութեան եմ դնում Պուրիշկևիչին, Կելէպօվսկուն և Սազօնովիչին 15 նիստերին չը թողնելու հարցը: Ով համաձայն է, թող նստած մնայ, իսկ ով դէմ է, խնդրեմ ոտքի կանգնէ»:

Սօցիալ-դեմօկրատները ձեռնպահ են մնում ձայնտուութիւնից:

Ոտքի են կանգնում բաւականաչափ աջակողմեաններ և մի քանի հոկտեմբերեաններ:

Նախագահը, դիմելով Դումայից հեռացվող անդամներ Պուրիշկևիչին, Կելէպօվսկուն և Սազօնովիչին, ասում է. «Խնդրում եմ ձեզ հեռանալ»:

Պուրիշկևիչը աղաղակում է. «Թող պրիստաւը ոյժով մեզ դուրս տանէ»:

Նախագահը յայտարարում է ընդմիջում. «Եթէ ընդմիջման ժամանակ նրանք չը հեռանան դահլիճից, այն ժամանակ նրանց դուրս կը տանեն ոյժով»:

Ընդմիջման ժամանակ Սազօնովիչը և Կելէպօվսկին հեռանում են դահլիճից:

Նիստը վերսկսվում է:

Պուրիշկևիչը, նստած իր տեղում, անհոգ լրագիր է կարդում:

Նախագահը. «Դումայի անդամ Պուրիշկևիչի վրա չեն ազդում ոչ Դումայի որոշումները, ոչ նրան ոյժով հեռացնելու երկիւղները: Որպէս զի Դումայի ընդհանուր ժողովում հարկ չը լինի դիմել այնպիսի միջոցների, ինչպիսին է բռնութիւնը, յայտարարում եմ նիստը փակված, յայտնելով, որ մեր պարապմունքները դադարեցնելու մեղքը ընկնում է ամբողջովին Դումայի անդամ Պուրիշկևիչի վրա»:

Շուլգինը տեղից. «Մեղքը ընկնում է ոչ թէ Պուրիշկևիչի, այլ ձեզ վրա, պարոն նախագահ»: (Աղմուկ, աղմուկ):

Նախագահը ասում է, որ 15 նիստերի հեռացրված անդամները դահլիճ չեն թողնվի:

Պուրիշկևիչը տեղից. «Կը գամ, երբ կը հասնի իմ հերթը խօսելու ժողովրդական կրթութեան մասին»:

Նիստը փակվում է 5 ժամ 25 րօպէին:

Ցրւված պատգամաւորները նրբանցքներում խմբերով կանգնած, երկար և կենդանի քննում են յանկարծակի այդօրինակ չափերի հասած միջադէպը:

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 4-ին

«Մշակի» № 89-ում զետեղված էր մի նամակ, ստորագրութեամբ Մխական, որը ուղղված էր իմ հասցէին, իբրև Վանքի մայր եկեղեցու երէցփոխի:

Այդ նամակով ինձ մեղադրում են, որ իբր թէ ես կատարել եմ մի քանի անտեղի վերանորոգումներ և աշխատութիւններ Վանքի գաւթում, առանց կանխապէս թոյլտուութիւն վերցնելու ծխականներից:

Թէպէտև ես սկզբունքով սովորաբար չեմ պատասխանում այդպիսի անստորագիր նամակների, բայց այս դէպքում ես ուրախ եմ, որ ծխականներից գոնէ մէկից լսում եմ յանդիմանութիւն, որովհետև մինչև այժմս լսել եմ գովարանութիւններ ուղղված իմ հասցէին, իբրև Վանքի երէցփոխի:

Մանրամասն բացատրութիւններ տալը իմ ձեռքով կատարված աշխատութիւնների մասին ես յետաձգում եմ մինչև ծխականների ընդհանուր ժողովը, որը պիտի հրաւիրեմ իմ ժամանակամիջոցս լրանալուց, այն է 1907 թ. յուլիսի սկզբներին: Իսկ այժմ կաշխատեմ բաւարարութիւն տալ վերոյիշեալ Մխականի շատ հասկանալի հետաքրքրութեանը:

Ինձ թւում էր, թէ հեղինակի համար պարզ պիտի լինէին, թէ ինչ-ինչ պատճառներով ես զրկված եմ եղել որևէ հնարաւորութիւնից 1905 և 1906 թ. գումարելու ընդհանուր ժողով. հայ-թուրքական ընդհարումները և յեղափոխական շարժումները բոլորովին հեռու էին պահել ծխականներին եկեղեցու գործերից:

Այժմս անցնենք բուն խնդրին:

Վանքի գաւթում ես ձեռնարկել եմ հետևեալ աշխատութիւնները, որոնց յետաձգել միանգամայն անկարելի էր, և ես կը բացատրեմ թէ ինչու. 1) Վանքի եկեղեցու և մի քանի շինութիւնների կտուրները երկար ժամանակ առանց նորոգելու մնալուց, սկսել են կաթել, հետևապէս անհրաժեշտ էր շուտով նորոգել, որը և ես արել եմ:

2) Անցքը, որ տանում է դէպի Յորդանանի կամուրջը, որը կառուցվում էր նախընթաց տարիները, ծածկել եմ հին փայտէ տախտակներով, որով ես կարծում եմ, որ ծխականներին և ծխականների երեխաներին ազատել եմ փոսը ընկնելու վտանգից, և յետոյ այդ տեղը ես ծածկել եմ քարէ պատով:

3) Քարէ պարիսպը սուաղել եմ բարկալով վերևի կողմից և նմանապէս երկու կողմից, որովհետև այդ պարիսպի վերևի մասից, սուաղ չը լինելու պատճառով, անցորդների վրա ընկնում էին աղիւսներ:

4) Վանքի եկեղեցու փողոցի կողմից անցկացրել եմ մայթ, որովհետև մի քանի անգամ դրա մասին յիշեցրել է Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը. հակառակ դէպքում վարչութիւնը ինքը շինել կը տար այդ մայթը ի հաշիւ Վանքի մայր եկեղեցու:

5) Վանքի գաւթում շինել եմ տուել 12 հատ նստարաններ, որպէսզի հնարաւորութիւն տամ ծխականներին մինչև արարողութեան սկսվելը հանգստանան նրանց վրա. այն ինչ առաջ ստիպված էին նստել կամ գերեզմանաքարերի վրա կամ ուղղակի գետնին:

Այս մասին շատ անգամ եղել են դիմումներ ինձ ծխականների կողմից:

6) Շինել եմ քարէ աղիւսի պանել Վանքի մուտքից մինչև առաջնորդարանի սանդուղքները. այս պանելը անցկացրել եմ առաջնորդի խնդիրքով (վկայ է երդուեալ-հաւատարմատար պարոն Սպենդիարեանը):

7) Տնկել եմ ծաղկանոց պարիսպի այն տեղը, որտեղ գտնվում է ջրանցքի կռանը. աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ այդ տեղը աղտոտում էին նոյն իսկ պատճառով, այդպիսի ծաղկանոց շինել եմ նաև մեծ շատրուանի շուրջը, դեռ անցեալ տարի: Եւ որովհետև մաւթուլի ցանկապատը կտրտել էին հոգատար ծխականները, ես ստիպված էի փայտէ ցանկապատով ծածկել:

Ահաւասիկ այն բոլոր աշխատութիւնները, որոնք ես կատարել եմ այն փողերով, որոնք եղել են իմ տրամադրութեան տակ:

Ինչ վերաբերվում է միւս աշխատութիւններին, ինչպէս Վանքի եկեղեցու ներքին պատերի նորոգումը, որը նստել է 3600 ռ., դրա համար 3000 ռ. տուել է պ. Ա. Ի. Մանթաշեանը:

Ջրանցքը և ջրանցքի կռանը ու ջրի ռակօվինան շինվել է պ. Ա. Պարսադանեանի հաշւով:

Աւելորդ չեմ համարում յայտնել, որ ինձ մեծ բաւականութիւն է պատճառում այն հանգամանքը, որ ինձ մեղադրում են իմ այն գործողութիւնների համար, որոնք ես արել եմ Վանքի մայր եկեղեցու թէ ներքին և թէ արտաքին բարելաւման համար, և ոչ թէ իմ անգործութեանս համար:

Այսպէս եմ հասկացել ես իմ պարտականութիւնը և այդպէս եմ հասկանում և այժմս:

Իսկ ինձ թողնում եմ դատել Վանքի ծխականների ընդհանուր ժողովին, որի առաջ ես խոնարհվում եմ և որի առաջ ես իսկապէս պատասխանատու եմ:

Երէցփոխ Վանքի մայր եկեղեցու՝

Արշակ Բաբեան

Մեծ-Դաղէթ, ապրիլի 23-ին

Մեռելոցին Դաղէթ գիւղի երկսեռ հասարակութիւնը հաւաքվեց հասարակական հանդըստարանը և եկեղեցական գերեզմանօրհնէք կոչված ծիսակատարութիւնը կատարեց:

Ըստ հին սովորութեան նստեցին նոյն հանգստարանի կանաչապատ ընդարձակութեան վրա և միասին ճաշեցին: Ճաշի ժամանակ կառավարում էր տանուտէր Նազար Շահգինաբեանը, որ Վեհափառի կենացը առաջարկելուց յետոյ՝ Ղազարոս քահ. Ամիրջանեանցը սկսեց նկարագրել աղքատների դրութիւնը և խնդրեց օգնել կոտորված եղբայրներին, որից յետոյ տանուտէրը սկսեց նուէրներ հաւաքել, որի գումարն եղաւ 23 ռուբլի: Ուղարկելով այս գումարը խմբագրութեանդ, խնդրում ենք յանձնէք Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովին:

Ուսուցիչ՝ Ս. Տէր-Դանիէլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ մայիսի 12-ին կոմս Վօրոնցօվ-Դաշկօվը իր ընտանիքով մեկնելու է Պետերբուրգ:

Երևանի նահանգապետը միջնորդութիւն է յարուցել Փոխարքայի առաջ և խնդրել է համապետական մատակարարական դրամագլխից 574 ռուբլի տալ Նոր Բայազէտի գաւառի Սուբատան գիւղի բնակիչներին, երեք տարվայ ընթացքում յետ ստանալու պայմանով: Պայմանաժամը հաշւելու է գալիք տարվանից:

Վելիամինօվսկի փողոցում և Հաւլաբարում գտնվող էժանագին գրադարանների 1906 թ. յաճախողների թիւը հետևեալն է. յիշեալ տարին Վելիամինօվսկի փողոցում գտնվող գրադարանը ունեցել է 357 բաժանորդներ, որոնցից 241 աշակերտներ են եղել և 23 բանուորներ. դաւանանքի վերաբերեալ՝ 309 հայ, 31 ռուս, 5 վրացի և այլ դաւանանք ունեցողներ 22 հոգի: Բացի դրանից ընթերցարանը ունեցել է յաճախողներ 1906 թ.—6475 հոգի վճարով (2-ական կոպէկ) և ձրի 15 հոգի օրական: Հաւլաբարի գրադարանը նոյն թւականին ունեցել է 519 բաժանորդներ. աշակերտներ—432 հոգի, բանւորներ—16. դաւանանքի վերաբերմամբ՝ հայեր 476, ռուսներ—22, վրացիներ—11 և միւս ազգութիւններ—10 հոգի: Յիշեալ գրադարանը ունեցել է ընթերցարանում 1037 հոգի ընթերցողներ.

Թիֆլիսի պօլիտեխնիկումի խնդրով դրամով գլխաւոր կոմիտէի դպրոցական մասնաժողովի անդամները ստացել են տպագրված նիւթ՛ը, որոնք բաղկացած են 30-ից աւելի յայտնի հասարակական գործիչների կարծիքներից այն հարցի վերաբերութեամբ—թէ որ[illegible] ինչ տեսակ բաժիններ է ունենալու պոլիտեխնիկումը կամ բարձր կրթական հաստատութիւնը հանդերձ համալսարանական և տ՛եխնիքական բաժինների և ինչպէս պէտք է կազմակերպված լինեն՝ ինչպէս կրթական, այնպէս և վարչական մասերը այս հաստատութեան։ Թերևս մենք մօտիկ համարների՛ց մէկում ծանօթացնենք յարգելի ընթերցողներին այդ հետաքրքիր նիւթի հետ մանրամասն կերպով։

—

Այսօր ցերեկվայ ժամը 3-ին Կովկասի Փոխարքայի պալատում կը կայանայ մի ժողով Փոխարքայի անմիջական նախագահութեամբ, որը զբաղվելու է Կախէտիայի երկաթուղին կառուցանելու խնդրով։ Այդ ժողովին հրաւիրված են զինւորական մասի օգնական Գ. Բ. Շատիլով և քաղաքացիական մասի օգնական սենատոր Միտկևիչը, Կովկասեան շրջանի կառավարիչ Զ. Մ. Բէլիման և Փոխարքայի դիւանապետի պաշտօնակատար Մակսիմով, Թիֆլիսի պաշտօնակատար Չերնյավսկին, ազնուականների պարագլուխ իշխ. Բագրատիոն Դավիդով, ճանապարհների հաղորդակցութեան Կովկասի մասի կառավարիչ Նովժեյկին, Ուլուխանլու-Ջուլֆա երկաթուղու կառուցման վերահսկիչ ինժեներ Վուրգել, անդրկովկասեան երկաթուղիների կառավարչի տեղապահ ինժեներ Զուբարով և ուրիշ մի քանի անձինք։ («Кав.»)

—

Պետական Դումայի անդամ Արշակ Զոհրաբեանի մասին մի այսպիսի տարօրինակ լուր է տպված «Թագա-Հայաթում».—«Մոսկվայից գրում են. «Պետական Դումայի անդամներից Զոհրաբովը Մոսկվայումն է։ Նա Զատկի ամբողջ շաբաթը հայ-լուսաւորչական եկեղեցում աղօթելով է անցկացրել»։

—

Թիֆլիսի գեներալ-նահանգապետը կարգադրեց փակել Սարաջեվի գործարանի բանւորների համար Շահնազարեանի նախաձեռնութեամբ մի շաբաթ առաջ բացված գրադարանը։

—

Տեղական խմբագրութիւններում և պարբերական հրատարակութիւնների գրասենեակներում ծառայող ցրիչները, էկսպեդիտորները, սչոտչիկները և պաշտօնեաները մայիսի 5-ին Թիֆլիսի նահանգապետին ներկայացրել են իրենց մշակած կանոնադրութիւնը հաստատելու համար։

—

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Թիֆլիսի ելէքտրաքարշը մայիսի 1-ին չաշխատեց, Թիֆլիսի ժամանակաւոր գեն.-նահանգապետը յիշեալ ընկերութեանը ենթարկել է 3000 րուբլի տուգանքի, առաջարկելով վարչութեանը, ադմինիստրատիւ տուգանքի երկիւղով, ոչ մի կերպ չը վճարել ծառայողներին գործադուլի մէկ օրվայ համար նրանց մէկ օրվայ ռոճիկները։

—

Կազիոննայ պալատը տեղափոխվում է Պետրոս Մեծի անունով կոչվող փողոցը, Զուբալովի տունը։

—

Քաղաքային դպրոցական մասնաժողովի վերջին նիստում որոշվել է արձակել քաղաքային դպրոցների բոլոր աշակերտներին և հակառակ ժողովրդական ուսումնարանների վերատեսչի կարգադրութեան, քննութիւնները սկսել և պարապմունքները շարունակել մինչև մայիսի 20-ը։

—

Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է քաղաքումս գարեջրատներ պահող Օտտօ Մաղէբիս, Րիխարդ Դիտրիխին և Ֆրիդրիխ Վէտցելին իրանց գործարաններին կից բանալ գրադարան-ընթերցարան բանւորների համար։

—

Թիֆլիսի մէշչանների աւագ Ս. Դանդուրովը հրաժարական է տուել, սակայն իր պաշտօնը առ այժմ չէ կարող թողնել, քանի որ իբրև թեկնածու ընտրված Ա. Ապրիամովը առայժմ իր պաշտօնում չէ հաստատվել նրա դէմ նահանգապետին ներկայացրած բողոքագրերի պատճառով։

—

Մայիսի 1-ը Բագւում.—Մայիսի 1-ը աւելի և աւելի կորցնում է իր ցոյցի բնաւորութիւնը և աստիճանաբար տօնի կերպարանք է ընդունում։ Բանւորները երէկ խաղաղ տօնեցին այդ օրը։ Նաւթահանքերի բանւորները, առաւօտեանից դուրս գալով աշխատանքի, շուտով թողին հնոցան վրդովեցուցիչ սուլոցների ազդանշանով։ Մի քանի տեղեր կազմեցին գործարանային ժողովներ։ Հասարակական ժողովներ ոչ մի տեղ չեղան։ Քաղաքը, ձիաքարշի բացակայութեամբ յիշեցնում էր աշխատանքի տօնը, իսկ առևտրական հաստատութիւնները համարեա բոլորն էլ բաց էին. սակայն առևտուրը այնքան էլ կենդանի չէր խանութներում առևտուր անում էին միայն տէրերը, որովհետև գործակատարները բոլորն էլ տօնեցին այդ օրը։ Միքայէլեան այգում և քաղաքի այլ պարտէզներում զբօսնում էին տօնական զգեստներ հագած հասարակութիւնը, որ եկել էր պաշարով։ Քաղաքում շրջում էին ուժեղացրած պահակախմբեր և կոզակներ, բայց ոչ մի ընդհարում տեղի չունեցաւ և վերջացաւ խաղաղ։

—

«Бак. Изв.» լրագիրը Կիսլովոդսկից, քաղաքային աւագ գեներալ-մայոր Իսայեվից ստացել է հետևեալ հեռագիրը. «Յայտնվում է ի գիտութիւն ընդհանուրի, որ Կիսլովոդսկում ներկայումս ոչ մի վարակիչ հիւանդութիւն չը կայ։ Եղանակը հրաշալի է։ Բոլորովին հանգիստ է»։

—

«Бак. Изв.» լրագրում կարդում ենք. «Ուղիղ առաւօտեան ժամը 9-ին, «Արևելեան ընկերութեան» «Վլադիմիր» նաւի հրամանատար Ի. Վորոնովը բանալով իր բնակարանի դռները, որ դուրս են գալիս Մոլոկանսկի փողոցը, սկսում է կամաց դուրս ենել փողոց։ Այդ ժամանակ, երևի սկզբից սպասող մի անյայտ անձնաւորութիւն կրակում է նրա վրա ատրճանակից։ Գնդակը դիպչում է մէջքին և դուրս է գալիս կրծքի ձախ կողմից։ Յանցաւորը փախչում է. ծանր վիրաւորված Վորոնովը տեղաւորված է հիւանդանոցում։ Առողջանալու յոյսը թոյլ է։ Վիրաւորելու իսկական պատճառը ճշտութեամբ յայտնի չէ։ Կարծում են, որ ծովային գործադուլի մէջ պէտք է որոնել նրան, որովհետև նա այդ օրերում աշխատում էր։

—

Շամախու բնակիչների մի խումբ դիմել է Փոխարքային և խնդրել է վերականգնել յիշեալ քաղաքում քաղաքային ինքնավարութիւնը, որը վերացվել է բարձրագոյն հրամանով, յիշեալ քաղաքում 1902 թ. տեղի ունեցած երկրաշարժից յետոյ։

—

Գանձակից մեզ հաղորդում են, որ գեն.-նահանգապետը, պարտադիր կանոնները խախտելու համար, քաղաքի մահմեդական մասին ենթարկել է 3000 րուբլի տուգանքի։

—

Մայիսի 1-ից Պեատիգորսկում բացվել է ամառային բժշկական սեզոնը։

—

Վլադիկավկազից հաղորդում են, որ առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Մամացեվի սպանութիւնը կատարվել է քաղաքական հողի վրա։

—

Առաջիկայ ամառը գերմանական ջրերում այցելութիւն տեղի կունենայ միապետների մէջև։

—

Գուրկոյի գործը արդէն վերջացել և յանձնվել է Պետական Խորհրդի առաջին դեպարտամենտին։ Գործը կուղարկվի ոչ թէ բարձրագոյն դատարանին, այլ սենատի առաջին դեպարտամենտին, որովհետև Գուրկոն գործել է ոչ մինիստրի փոխարէն, այլ իբրև օգնական մինիստրի, իսկ օրէնքով միջանիշնական մատակարարական խորհրդի նախագահը պէտք է լինի մինիստրի օգնականներից մէկը։

—

Զինւորական դրութեան և արտակարգ հսկողութեան հարցը հերթական կը դարձվի յուլիսին՝ Պետերբուրգի արտակարգ հսկողութիւնը վերացնելու կամ շարունակելու հարցը քննելուց յետոյ։

—

«Парусъ» լրագրի ասելով, էս-էրների համագումարից ստացվել է առաջին նամակը, որից երևում է, որ համագումարում մեծամասնութիւն են կազմում մեծամասնականները։ Համագումարը խոստանում է լինել շատ հետաքրքրական։ Ոստիկանական դեպարտամենտի գործակալները հաղորդում են համագումարին մասնակցողների անունները ու ազգանունները։

—

Ռուս ժողովրդի միութիւնը, ի նկատի առնելով Պետերբուրգի բարձր ադմինիստրացիայի կողմից իրանց դէմ սկսված բռնբերխանները, մտադիր է միութեան գլխաւոր խորհուրդը և «Русск Знамя»-ի խմբագրութիւնը փոխադրել Մոսկվա։ («Парусъ»)

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մայիսի 4-ին, երեկոյեան ժամը 9-ին, երկ. Թիֆլիսի կայարանում ատրճանակի 3 հարուածով մի անյայտ չարագործ սպանել է երկաթուղու ուղևոր Տրիֆոն Վզովկին։ Չարագործը անյայտացել է։

—

Մայիսի 4-ին, ցերեկվայ մօտ ժամը 12-ին, Ուսպենսկի տուպիկում բնակվող Արշակ Մդիվանովի բնակարանից անյայտ չարագործներ կոտրելով կողպէքը, գողացել են 446 ր. 10 կ. զանազան իրեր։

—

Մայիսի լոյս 5-ի գիշերը Միքէն փողոցում անյայտ չարագործները ատրճանակի հարուածներով սպանել են աւագ դռնապան Գէորգ Տէր-Սահակովին։ Սպանվածի դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, ապրիլի 28-ին

Անցեալ յօդուածով յայտնել էի, որ Թեհրանից հրամայված է տեղիս «Անջումանին» անմիջապէս յետ դարձնել քշված նահանգապետին. այդ հրամանը երէկ կատարումն ստացաւ։ «Անջումանի» անդամները համարեա ամենքը ընդառաջել էին և ովսաննաներով քաղաք մտցրին։ Ասում են, որ նահանգապետը իր մի քանի պայմանները «Անջումանին» ընդունել տալուց յետոյ է համաձայնել վերադառնալ։ Թէ ինչ պայմաններ են՝ դեռ յայտնի չեն։ Յամենայն դէպս սա մի ծանրակշիռ հարուած էր, որ իջաւ «Անջումանի» գլխին, որին՝ սկզբնաւորութեան օրից ժողովուրդը նայում էր որպէս մի ամենակարող հաստատութեան վրա։ Հաւանական է թւում, որ նահանգապետը այսուհետ կանցնէ իր պաշտօնի գլուխ, որին «Անջուման»-ը ստիպված է տեղի տալ, որովհետև հրամանը Թեհրանի «մէջլիս»-ից է և ժամանակաւորապէս հենց Ատրպատականի պատգամաւորներից։ Այլ կերպ լինել էլ չէ կարող, որովհետև «Անջումանը» չէ կարող ամբողջ Ատրպատականը կառավարել. չէ որ գործադիր մարմին է պէտք. վերջինիս դերը իր վրա յանձն առնելու յաւակնութիւնն էր, որ ստիպեց Պարսկաստանին «ամբոխապետութեամբ» կառավարվել, որի շարունակութիւնը կորստաբեր հետևանքներով պիտի պարգևատրէ ժողովրդին։

Մի քանի օր առաջ լսեցինք, որ «մէջլիս»-ի մշակած «կանոննամէ»-ն (օրէնսդրութիւնը) Շահը ընդունել, ստորագրել է, բայց այդ լուրը չը ճշտվեց. ասում են, Շահը ասել է՝ Թողէք նախ հոգևորականութիւնը վաւերացնէ, ապա ես ընդունեմ, իսկ հոգևորականութիւնը պարզ է, որ ընդունել չէ կարող, այլապէս դա կը նշանակէր «Շարիաթ»-ը հաշտեցնել «կանոննամէի» հետ. մինչդեռ այդ երկուսը անհաշտ հակառակորդներ են ու անսահման անջրպետով իրարից բաժան։

Աթաբէկի Թեհրան գալով պարսկական շարժումը նոր շրջանի մէջ է մտնում. եթէ սա ևս չը կարողանայ պետական խանգարված մեքենան վերանորոգել, այն ժամանակ Պարսկաստանը պիտի նմանեցնել մի նաւի, որը առանց նաւապետի՝ պիտի մատնված լինի ալեկոծ ալիքների կամայականութիւններին, մինչև որ հիւսիսից կամ հարաւից օտար նաւեր աշխատեն օգնութեան հասնել ու փրկել նրա «ճակատագիրը»...

Մենք չենք հաւատում աղա Ջաֆար Հասան Զադէի այն յայտարարութեան, որ Կովկասում 64,000 թուրք հայրենասէր «ֆիդայիներ» կան, որոնք Պարսկաստանի բարօրութեան համար ուխտել են իրենց արեան վերջին կաթիլը անգամ չը խնայել, եթէ Պարսկաստանը շուտով սահմանադրական երկիր չը դառնայ. եթէ ճիշտ լինէր այդ յայտարարութիւնը, այն ժամանակ ոչ թէ դարերի կործանիչ ռեժիմը կարելի էր փոփոխութեան ենթարկել, այլ նոյն իսկ լեռները կարելի կը լինէր շարժել։ Մի քանի գիշեր առաջ «ֆիդայի»-ներից 3—4 հոգի մտնում են մի վաճառականի տուն և 1000 թուման փող պահանջում, հակառակ դէպքում սպառնում են ուղղակի գլուխը կտրել. երբ համոզվում են, որ տանը կանխիկ փող չը կայ, ստացագիր են առնում ու հեռանում։ Երբ բռնվեցին չարագործները, ասացին՝ որ «Անջուման»-ի համար էին ուզում այդ գումարը...։ Շահագործելու նոր միջոց թուրք ֆիդայիների համար։ Եթէ, Տէրը մի արասցէ, հանգամանքները թոյլ տան թուրք «ֆիդայիութեան» առաջադիմելու այնպէս՝ ինչպէս մերը, այն ժամանակ մի մեծ խաչ պիտի քաշել ամբողջ Պարսկաստանի վրա։

Ցանկանք, որ նորեկ աթաբէկը կարողանայ այնպիսի մի միջին ճանապարհ գծել Պարսկաստանի համար, որ հոգեվարքում գտնվող տառապեալ ժողովուրդը կարողանայ վերակենդանանալ, յուրախութիւն թէ ամբողջ Իրանի և թէ հանուր «մարդասէր» մարդկութեան, որը իր եղբայրների տանջալից կեանքի տխուր տեսարաններին ականատես լինելուց ազատված կը լինի։ Նոր օր, նոր արև մաղթենք մեր տառապեալ երկրին։

Իբօ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

4 մայիսի

ՄՈՍԿՎԱ, 3 մայիսի։ Օլովեանիկովի տանը ոստիկանութիւնը գտաւ սոցիալ-յեղափոխականների 6 պուդ թռուցիկներ։

ՎԻԵՆՆԱ, 3 մայիսի։ Սոցիալիստ Պրիգորովիչի կողմնակիցները, որոնք պարտութիւն կրեցին ընտրութիւններին, Չեռնովիցում անկարգութիւններ արին և աշխատեցին յարձակում գործել շրջանապետի տան վրա։ Ոստիկանութիւնը և զօրքը ցրեցին ցուցարարներին։ Ծանր վիրաւորված են հինգ ոստիկաններ և 2 հոգի հասարակութիւնից։ Ձերբակալված են 100 մարդ։

ՍՕՖԻԱ, 3 մայիսի։ Սուրբ Բորիսի տօնը ամբողջ Բուլղարիայում կատարվեց շքեղ հանդէսներով։

ՏՕԿԻՕ, 3 մայիսի։ Կաբինետի օրգանը յիշատակում է, որ պատերազմից յետոյ շատ օտարազգի կապիտալիստներ աճապարեցին Ճապոնիա, սակայն անբարեյաջող հանգամանքների պատճառով նրանց ձեռնարկութիւնները շատ քիչ աջողութիւն են ունենում և աստիճանաբար աւարտվում են։

ԼՕՆԴՕՆ, 4 մայիսի։ Ստորին պալատի նիստերը ընդհատվեցին մինչև մայիսի 10-ը։

ՓԱՐԻԶ, 4 մայիսի։ Երգիչ Շալեապինը [illegible] են կատարում։

ՀՌՕՄ, 4 մայիսի։ Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, թագաւորը ընդունեց պետական գանձարանի մինիստր Մայօրանի հրաժարականը և նրա տեղ նշանակեց Կարկանոյին։

5 մայիսի

ՏՕԿԻՕ, 4 մայիսի։ Նագասակիում սկսեց լոյս տեսնել ռուս-ճապոնական առևտրա-արդիւնաբերական շաբաթաթերթ։ Առաջնորդող յօդուածում ասված է, որ թերթը նպատակ ունի զարգացնել առևտրական գործը Ռուսաստանի և Ճապոնիայի մէջև։

ՄՈՍԿՎԱ, 4 մայիսի։ Համալսարանի կենտրոնական մարմինը համալսարանը բանալու մասին համալսարանական ժողովի վճիռը անվաւեր ճանաչեց և նշանակեց նոր ժողով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 մայիսի։ Ներքին գործերի մինիստրութիւնը մերժեց Բրոյդոյի միջնորդութիւնը՝ թոյլատրելու Վիլնայում, մայիսի 27-ին գումարել հրէական տերրիտորիալիստ ընկերութեան բաժանմունքի համագումարը։

Լրագրական այն լուրերը, թէ կառավարութիւնը ստարօոբրեադցիների վերաբերութեամբ նոր օրինագիծ է պատրաստում, սխալ են։

ԼՕՁ, 4 մայիսի։ Այսօր առաւօտեան, Պոդլէշնի փողոցում յարձակում եղաւ պօստի վրա, որ գլխաւոր պօստի շինութիւնից գնում էր Կալիշի երկաթուղու կայարանը կառապանի, նամակատարի, պաշտօնեայի և 4 կոզակների ուղեկցութեամբ։ Մօտ 30 զինված անձինք սկսեցին կրակել պօստի վրա։ Սպանվեց կոզակներից մէկը, երկուսը ծանր վիրաւորվեցին. պաշտօնեան վիրաւորվեց ոտքից. երկու ձի սպանվեցին, մէկը՝ վիրաւորվեց։ Գողացվեց ամբողջ պօստը, որ պարունակում էր 81,728 րուբլու արժեթղթեր, երեք պայուսակ ծրարներով, երկու ծրար 1019 րուբլու պարտամուրհակներով և հասարակ նամակների պայուսակ։ Կանխիկ դրամ պայուսակներում չը կար։ Անմիջապէս երևացին պահակները, որոնք սկսեցին հետապնդել յարձակվողներին. վերջիններիս մի մասը թագնվեց Կուսլէրի գործարանի շինութեան մէջ։ Վրա հասած կոզակները սկսեցին հետևել փախչողներին։ Լսվեցին ատրճանակի կրակոցներ։ Կոզակները պատասխանեցին նոյնպէս կրակով։ Հետևանքում պարզվեց, որ սպանվել են 19 և վիրաւորված են 34 հոգի։ Գործարանի շինութեան մէջ գտնվել են դատարկ շատ փամփուշտներ։ Դէպքի տեղը շրջապատվեց զօրքերով։ Տեղի են ունենում մասսայական խուզարկութիւններ։ Գործարանում աշխատանքները կանգ առան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներաբուժութեան, վեներական (սեֆիլիս) միզասեռ. հ.։
Հ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒՆՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒԳԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻՆՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—$1\frac{1}{2}$—2 ժ. մանկաբարձութեան։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

„Գուտտենբերգ“
գրախանութում վաճառվում են
ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ
աշխատութիւններից հետևեալները

Հայոց գիրը, պատկված մրցանակով.	1 50
Համառօտ տրամաբանութիւն	1 —
Գերմանիայի մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնները	— 40
Ներսիսեան դպրանոցի առաջին դպ. ճանապարհորդութիւնը	— 40
Երկր. ճանապարհորդութիւնը	— 20
Աշակերտի յուշատետրը	— 30
Իմ օրագիրը	— 25
Ծաղկոց (ման. պարտէզ)	— 10
Զգացմունք. աշխարհ («Վէրք Հայաստանի»-ի մասին)	— 30
Ե. Սպիրի. Կին վիպագիր	— 15
Ստեփաննոս Պալասանեան	— 25
Սանահին	— 30
Գօշայ վանք Գօշ Մխիթարի կենսագրութեամբ	— 40
1500 տարի առաջ (հայոց տառերի գիւտը)	— 20
Թարգմանութիւնները (գերմաներէնից).	
Պեստալոցցի, Լինհարդ և Գերտրուդ	1 50
Ժան Ժակ Ռուսօ, Էմիլ (Թարգ. ընդարձակ առաջաբանով) ա. բ. հատ.	— 30
Պրոֆ. Ռատցել, Տարերք ազգագրութեան	— 50
Հուքսլէյ, Բնագիտութիւն	— 40
Նաւման, Երգըում	— 15
Հայրենագուրկ	— 50
Մ. Եօկայի, Ուրացողը	— 20
Տնային բժշկարան, հրատ. բժ. Գ. Բաբեանի (ա. և բ. հատոր)	2 60

Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «Гутенбергъ» Г. И. Галустянцу. 3—3

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Մայիսի 1-ից վերսկսում է հիւանդների ընդունելութիւնը Պեատիգորսկում (հանքային ջրերը)։
Հասցէն՝ Д-ръ В. Арцруни Пеатигорскъ. Верхн. буль. варъ, д. кн. Гирей.
(Ե. ու. Կ.) 2—100

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Իմ շատ գործող մեքենաների
մասին

Ամեն մի աշխատող կին կամ տղամարդ 12 տարեկան հասակից կարող է օրական 1 ր. 50 կ. և աւելի արդիւնք ունենալ ինձանից գնված նորութեան շատ գործող մեքենաները միջոցով։ Նախնական գիտելիքներ պէտք չեն։ Մեքենաներն այստեղ և եթ կարելի է տեսնել։ Թելը ես եմ վաճառում և պատրաստ գործը, վարձատրելով կանխիկ փողով, ընդունում եմ։ Բոլոր մանրամասն տեղեկութիւնները տալիս եմ ձրիաբար և սիրով իմ գրասենեակում կամ պօստով։ Կովկասի միակ ներկայացուցիչը լինում է Թիֆլիսում։
Դիմել՝ Тифлисъ, контора «скоровязальныхъ машинъ», Троицкая ул. 7, по сосѣдству съ глав. почтово-телеграфной конторою.
Զգուշացէք կեղծ մեքենաներից, որոնք զանազան անուններով առաջարկում են։
(Ե. Չ. ու. Կ.) 2—25

Վերա, Վակէից շատ մօտ, այգիների մէջ, ապագայ կադետսկի կորպուսից ոչ հեռու, «բաղեր» կոչված այգիների մէջ ծախվում են հողաբաժիններ 20—50 կոպ. քառակուսի սաժէնը. կայ և առողջարար ջուր. ցանկացողները թող դիմեն Ց. Շահնազարեանին, «Խաթաբալայի» գրասենեակում, առաւօտեան 10—12 ժամը։
Այս տեղը աւելի մօտ է քաղաքի կենտրոնին, քան Նախալովկան, Դէլիսը, Մախաթի սարի լանջը և Նաւթլուղի հողաբաժինները։
Կիրակի, ամսիս 6 ին, առաւօտեան ժամը 10-ին պէտք է գնալ հողերը տեսնելու, ուստի և ցանկութիւն յայտնողները պէտք է լինեն Օլինեթակի փողոցի վրա, ազնուականների ուսումնարանի մօտ։
(ու. Կ. Ե.) 2—3

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
գրավաճառանոցում ծախվում է
ՄՈՒՐԱՑԱՆԻ
ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
առաջին հատորը
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Նոյի Ագռաւը
Առաքեալը
և
Խորհրդաւոր միանձնուհի
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 ԿՈՊ.
պօստի ծախքով 2 րուբլի
3—3

Լոյս տեսաւ
„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԻ“
№ 17
ՀԵՏԵՒԵԱԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

Կը զարթնէ՞	Տ. Զաւէն
Թիւրքերը և յառաջադիմութիւնը	Սարտէզդին
Յեղափոխութիւնը կարելի չէ սանձել	Պիրիս
Ինչու ենք անջատում Դաշնակցութիւնից (վերջ)	Րիխարդ
Դեկտեմբերի օրերից (բանաստեղծ.)	Արփենիկ
Ֆրանսիական քաղաքականութիւնը և Տաճկահայ Խնդիրը	Բ. Իշխանեան
Թիւրքահայ գրականութիւն Ջիբերը II	Զ. Եսայեան
Մամուլի շուրջը	
Գերմանիան Փոքր-Ասիայի մէջ	Ալիս
Թղթակցութիւններ	
Նամակ Վանից	Վանեցի
» Կ. Պոլիս	«Պիրամիդ»
Թիւրքիայի կուլտուրական և տնտեսական կեանքէն	
Լուրեր	
Նամակ Խմբագրութեան	
Ստացւած գրքեր	
Յայտարարութիւններ	

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ
արտասահման մեկնելու
ՊԱՏՃԱՌՈՎ
ծախում եմ շատ լաւ սկսած գալանտերէյնի և թղթի մեծ մագազին, որը վաճառում է օրական 200 րուբլուց ոչ պակաս։ Պայմանների մասին կարելի է իմանալ «Версаль» հիւրանոցի գրասենեակում։
(6, 8, 10, 12, 13) 1—5

ԱԺՈՒՐԴ
Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի
Հոգաբարձութիւնը,
այս տարվայ մայիսի 6-ին, կիրակի ցերեկվայ ժամը 12-ին,
ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ
Նշանակել է
ԱՃՈՒՐԴ
կրկնաճրգով կապալով տալու Ռուսսկի և Սոլդատսկի բազարում գտնված այրված շէնքի հիմնական վերանորոգութեան մի յարկանի շինութեան կառուցումը։ Շինութեան յատակագիծը, նախահաշիւը և պայմանագիրը կարելի է տեսնել դպրոցի խորհրդարանում ամենայն օր, բացի տօներից, առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը։
(Ն. Կ.) 2—2

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ
(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բագու			
Արագ	6 ժամ	58 ր.	առաւօտ.
Մարդատար	9 »	3 »	»
Պօստատար	8 »	34	երեկոյեան
Թիֆլիսից դէպի Բաթում			
Պօստատար	1 ժամ	21 ր.	ցերեկվայ
Արագ	11 »	58 »	գիշերվայ
Մարդատար	1 »	3 »	»
Թիֆլիսից դէպի Բօրժօմ			
Մարդատար	9 ժամ	48 ր.	առաւօտ.
»	3 »	8 »	ցերեկվայ
Թիֆլիսից դէպի Երևան			
Մարդ-ապրանք.	1 ժամ	43 ր.	ցերեկվայ
Պօստատար	1 »	8 »	գիշերվայ

ՀՐԱՒԷՐ
Բեթղեհէմի ս. Աստուածածնի երէցփոխի ժամանակամիջոցը լրացած լինելու առիթով, ամսիս 6-ին, կիրակի, առաւօտեան ժամը 10-ին, առաջին անգամ ժողով է լինելու նոր երէցփոխ ընտրելու. ուստի սրանով հրաւիրում եմ յիշեալ եկեղեցու մեծապատիւ պ. ծխերին, որ նշանակված օրը և ժամին շտապեն եկեղեցի՝ ընտրութեանը մասնակցելու։
Գործակալ ս. մասին Թիֆլիսի՝
Գրիգոր քհ. Մանգակունի
(Կ.) 1—1

Լոյս տեսաւ
„ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ“
ԿԱՄ
մարդուս մարմնի կազմախօսութեան եւ բնախօսութեան դասեր։
ՄԱՍՆ I.
Կազմեց ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ
2-րդ տպ. բարեփոխած և 72 պատկերներով ճոխացրած, 164 մեծադիր երես
Գինն է 60 կօպ.
Դիմել՝ Тифлисъ, «Кавказская книжная торговля», Зах. Грикурова.
(Շ. Կ. Ե.) 1—3

Լոյս տեսաւ
ԷԴՈՒԱՐԴ ԲԵՐՏՐԱՆ
ՄԵՂՈՒՆԵՐԻ
ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ
Թարգմ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
76 նկարով և փեթակի երեք գլխաւոր տեսակների գծագրական քարտերով։
ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ
Վաճառվում է Կովկասեան Շերամապահական կայարանում։
Ա. Օ. 3—10

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան
Վարչութիւնը
պատիւ ունի յայտնելու ընկերութեան մեծարգոյ անդամներին, որ կիրակի մայիսի 6-ին, առաւօտեան ժամը 11-ին, քաղաքային տան դահլիճում նշանակված է տարեկան՝
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.
1. 1906 թւի հաշւետւութիւնը։
2. 1908 թ. նախահաշիւը։
3. Հանգուցեալ Յովհաննէս Խուդաեանի ընկերութեան կտակած քարավանսարայի շինութեան հարցը։
4. Որբերի դպրոցի հարցը։
5. Վարչութեան 4 անդամների, 4 փոխանդամների և վերստուգող յանձնաժողովի 3 անդամների ընտրութիւնները։
6. Ընթացիկ հարցեր։
(Ն. Շ. Կ.) 3—3

РѢДКОЕ ИЗДАНІЕ
Подписка принимается только до 1 іюля.
За 6 руб. подписчики получатъ 24 №№ журнала, и 24 тома приложеній.
„ВОЛНЫ“
Журналъ выходитъ два раза въ мѣсяцъ. При каждомъ № особое приложеніе
24 нумера журнала, откликающагося на всѣ злобы дня и наряду съ нимъ
24 книги приложеній отъ 10—15 печатн. листовъ каждая, посвященныя произведеніямъ великихъ европейскихъ писателей, отражающимъ доброе старое время во всемъ его блескѣ и великолѣпіи.
10 Книгъ „РОКАМБОЛЬ“ соч. Понсонъ-дю-Террайля
2 Книги „ДЕКАМЕРОНЪ“ соч. Боккачіо.
2 Книги Поль-де-Кока 1) Похожденіе мужа покинутаго женой. 2) Бѣдовая женщина и др.
2 Книги ЗАПИСКИ ПАЛАЧА
2 Книги Тайны Берлинскаго двора
2 Книги Тайны Русскаго двора
1 Книга Тайны ЛОНДОНА
2 Книги Тайны ЖЕНСКИХЪ МОНАСТЫРЕЙ сочиненіе Карачіолло.
1 Книга ПОЛУДѢВЫ Марсель-Прево
Годовые подписчики, внесшіе всю подписную плату до 1 іюля, получатъ безплатно приложеніе впервые появляющіяся въ столь полномъ видѣ историческія мемуары.
„Короли на эшафотѣ“
Подписная цѣна за годъ 6 р., за 1/2 года 3 р., допуск. разсрочка
Контора журн.: С.-Петербургъ, Невскій пр., д. № 82
Редакторъ-Издатель Р. Л. Антроповъ.
(շաբաթը 1 անգամ) 2—3

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԸ
առանց սեռի և հասարակական դիրքի խտրութեան կարող է ձեռք բերել
3-ՐԴ ԱԶՆՈՒԱԿԱՆ ՓՈԽԱՏՒՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՐԿՈՒ ՏՈՄՍԱԿՆԵՐ
առանց որևէ նիւթական ծախսի, յատկացնելով միմիայն սովորական պարապմունքների, ետանդի և անձնական աշխատանքի չնչին մասը։
Այդ ձեռնտու առաջարկով օգտվել ցանկացողները կարող են ստանալ ձրիաբար ընդարձակ ծանուցումը
Դիմելով՝ Банкирской Конторѣ «ЗАХАРІЙ ЖДАНОВЪ»,
С.-Петербургъ, Невскій просп. № 28.
(57995) (29, 7,) 2—2

Տպարան «Հ Ե Ր Մ Է Ս» Ընկ.

Электропечатня Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская № 5. Телефонъ № 852